№ 249 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 9 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1910

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 9 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 249

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.

Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրատան տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Խմբագրատան տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-ԻՑ 1910 Թ.

ՖԱԲՐ ՄԱՐԿԱ 1910 ՔՈՄԵԹԱ T-BA

ԹԻՖԼԻՍՈՒՄ ՔՈՄԵԹԱ ТИФЛИСЪ Աշնայակի հրապ. № 8.

ԲԱՑՎՈՒՄ Է

ԾԽԱԽՈՏԻ ՆՈՐ ԳՈՐԾԱՐԱՆ

ԸՆԿ. „ԿՕՄԷՏԱ“

ՖԻՐՄԱՅՈՎ

Ֆաբրիկայի վարչութիւնը հարկ է համարում տեղեկացնել յարգելի հասարակութեան, որ ինքը 2 տարուց աւելի պատրաստվելով բանալ ծխախոտի գործարան, ձեռք է առել ամեն միջոցներ՝ ֆաբրիկան դնելու այնպիսի պայմաններում, որ կարելի լինի համեմատաբար ոչ-բարձր գներով բաց թողնել ամենաբարձր յատկութեան ապրանք։

Այդ նպատակով ֆաբրիկայի վարչութիւնը մեծ քանակութեամբ գնել է լաւ տեսակի ծխախոտ, ձեռք է բերել միանգամայն կատարելագործված մեքենաներ, որոնք կրճատում են արդիւնաբերութեան ծախքերը։ Պ. պ. ծխողներին ապահովելու նպատակով՝ ֆաբրիկան դրված է առողջապահական հիժունքների վրա, բանւորները վարձված են ֆաբրիկային բժշկի քննութիւնից յետոյ, որին և յանձնարարված է պարբերաբար զննել բանւորներին։

Յայտնելով հասարակութեանը մեր ֆաբրիկայի բացման մասին, վարչութիւնը չը պիտի դիմէ սովորական բազմախոստում բէկլամների, համոզված լինելով՝ որ ամենալաւ բէկլամ կարող է ծառայել մեր արդիւնաբերութեան բարձր յատկութիւնը։ Ցոյս դնելով հասարակութեան ուշադրութեան, վարչութիւնը ձեռնարկում է գործին՝ դէվիզով—

ԱՍՏՈՒԱԾ ՄԵԶ ՀԵՏ

Եւ խնդրում է ապառողներին հաւասարական կերպով հաւոզվել

ԸՆԿ. „ԿՕՄԷՏԱ“

(ու.կ.ե.) ՖԱԲՐԻԿԱՅԻ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՒԵԼՈՒԹԵԱՆ ՄԵՋ։ 1242. 3—3

ՍԻՆԵՄՕ-ԹԱՏՐՕՆ

„ՄՕԴԷՐՆԻՑ“

(Բիւրեղի շինութիւն)

ԱՑՍՕՐ, ՀԱՐՈՒՍՏ ԾՐԱԳՐԻՑ ԴՈՒՐՍ

ԶԻՆԱՅԻՆԵՐԻ ՊԱԼԱՏԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ

կը ներկայացնի նորութիւններ

ԱՊՇԵՑՆՈՂ ՏԵՍԱՐԱՆ! ԱՄԵՆՈՒՐԵՔ ԽՈՇՈՐ ԱԶՈՂՈՒԹԻՒՆ!

Բացի այդ, ցոյց կը տրվի մի պատկեր՝

Կոմս Լէվ Նիկոլայէվիչ Տօլստոյը

ԵԱՍՆԱՅԱ ՊՕԼԵԱՆԱՅՈՒՄ

ՎԵՐԱՑԱԻ ՄԵԾ ՀՈԳԻՆ

Մեռաւ մարդի տիտանը։

Այլևս չը կայ ժամանակակից մեծագոյն մտածողը և փիլիսոփան, Լէվ Տօլստոյը։

Դադարեց ապրելուց նա, ով տասնեակ տարիներից ի վեր իր բարոյախօսական և փիլիսոփայական մտքերով, խոհերով հմայված ու կաշկանդված էր պահում ոչ միայն Ռուսաստանի, այլ և Եւրոպայի, Ամերիկայի, ամբողջ աշխարհի հոգևոր բարոյական աշխարհայեացքը։

Անհետացաւ նա, ով այսուհետև պէտք է դասվի Բուդդաների, Սօկրատների, Պլատոնների և ամենամեծ բարոյախօսների շարքում։

Մեռաւ ռուսական հանճարի ամենազօրեղ ներկայացուցիչը, որ միևնոյն ժամանակ եղաւ և համամարդկային հանճարի ամենազօրեղ արտայայտիչը։

Նա և եղաւ համամարդկային խրճմանքի ցայտուն արտայայտիչը։ Նա եղաւ ամբողջ մի մեծ իմաստասիրական, բարոյախօսական դպրոցի, ամբողջ մի դաւանութեան հիմնադիրը։

Նրա հետ միասին չքացաւ և ռուսական գեղարուեստական գրականութեան ամենավեհ և ամենանշանաւոր դէմքերից մէնը, «Պատերազմի և Խաղաղութեան», «Աննա Կարենինայի», «Ցարութիւնի» հեղինակը, հեղինակը աշխատութիւնների, որոնք ունեցան և դեռ երկար ժամանակ կունենան անդիմադրելի, անջնջելի, հսկայական ազդեցութիւն ամբողջ ռուսական գեղարուեստական գրականութեան և գրողների վրա։

Չքացաւ ապաբէզից աշխարհիս ամենամեծ վերացական գաղափարական վարդապետը, քարոզիչը։

Տօլստոյի մահը դնցելու է ամբողջ մտաւոր աշխարհը, որովհետև ամբողջ մտաւոր աշխարհը յանձին Տօլստոյի կորցնում է մարդի մի տիտան, մի հսկայ, որի նմանը դարերը յաճախ չեն ծնում։

Տօլստոյը մեռաւ իբրև մահկանացու մարդ, բայց նա արդէն անմահացած էր իբրև հոգի, իբրև հանճար իր մտքերով, իր վարդապետութեամբ իր բարոյական և փիլիսոփայական դաւանանքով և յաւիտեան անմահ կը մնայ, որովհետև նրա հոգին բաղում դարեր կը սաւառնի Ռուսաստանի և քաղաքակիրթ աշխարհի մտաւորականութեան վրա։

Տօլստոյը ձևական քրիստոնեայ չէր, բայց ոչ ոք այնքան մօտ չէր Քրիստոսի վարդապետութեան, որքան նա։

Նա չարին կամենում էր դիմադրել՝ նրան հակառակ չը կալով։ Նա ձգտում էր չարը զինաթափ անել բարու միջոցով։

Նրա մեծ, վեհ հոգին շարունակ փոթորկվում, ալեկոծվում էր այն հակասութիւններից, որոնցով լի է աշխարհիս կեանքը, և նա ձգտում էր գտնել այն հաւասարակշռութիւնը, որ պէտք է դէպի երջանկութիւն տանէր ամբողջ մարդկութիւնը, վերջ դնէր նրա տառապանքներին, աղէտներին և կեանքի հակասութիւններին։

Նրա ալեկոծված, փոթորկված հոգին այժմ գտաւ յաւիտենական հանգիստ։

Թող հանգչի խաղաղութեամբ այդ վեհ, պայծառ հոգին։

Հ. Առաքելեան

ԼԷՎ ՏՕԼՍՏՕՅԻ ՄԱՀՎԱՆ ՇՈՒՐՋԸ

«Մշակի» խմբագրութիւնը երէկ ուղարկեց Մոսկվա «Русскія Вѣдомости» լրագրի խմբագրութեան հետևեալ ցաւակցական հեռագիրը Լէվ Տօլստոյի մահվան առիթով.

«Մշակ» լրագրի խմբագրութիւնը և աշխատակիցները, համակված ջերմեռանդ զգացմունքով դէպի հանգուցեալ մեծ գեղարուեստագէտ և մտածող Լէվ Տօլստոյի հանճարեղ անձնաւորութիւնը, մասնակից են ռուս ժողովրդի անսահման վշտին, ժողովրդի, որ կորցրել է յանձին հանգուցեալի հզօր բարոյական տիտանի՝ պարծանքը իր հայրենիքի և ամբողջ մարդկութեան։»

(Սեփական թղթակից)

Մոսկվա, 7 նոյ., ցեր. ժամը 12-ին

Այսօր, առաւօտեան ժամը 5-ին և 53 րոպէին, Օստապովոյում վախճանվեց Լէվ Տօլստոյը։ Մայրաքաղաքի լրագիրների արտակարգ յաւելուածները միմեանց ձեռքից խլվելով են կարդացվում։

Ոսկու-Զօն

(Սեփական թղթակից)

Մոսկվա, 7 նոյ., ժամը 1 և 30 ր.

Վախճանվեց Լէվ Տօլստոյը առաւօտեան ժամը 6-ի մօտերը։ Մոսկվայի հայոց եկեղեցում կատարվեց հոգեհանգիստ։

Է.մ. ք. Նազարեան

(Սեփական թղթակից))

Մոսկվա, 8 նոյեմբ., 9 ժ. 50 ր. առ.

Տօլստոյի մահվան առիթով առաջին հոգեհանգիստը տեղի ունեցաւ Մոսկվայի հայոց եկեղեցում երէկ՝ աղօթողների խուռն բազմութեան ներկայութեամբ։

Ներկայացուցիչները յետաձգված են։

Նոյեմբերի 9-ին Եասնայա-Պոլեանայում տեղի կունենայ քաղաքական հոգեհանգիստ։

Ամբողջ Ռուսաստանը սգի մէջ է։

Ոսկու-Զօն

Աստապովո, 6 նոյեմբերի

Երէկ երեկոյեան տաքութիւնը 36,8 էր։ Ընդհանուր տրամադրութիւնը աւելի լաւ է։ Նոյեմբերի լոյս 6-ի գիշերը Տօլստոյը անցրեց հանգիստ։

Գիշերվայ ընթացքում դրութիւնը բարւոքվեց։ Առաւօտեան տաքութիւնն էր 37,2. շնչառութիւնը լաւ է, բայց թուլութիւնը մնացել է։ Տեղի է ունենում վեց բժիշկների համախորհուրդ։

Ցերեկվայ ժամը 2-ին։ Տօլստոյը լաւ է. մի քիչ ձու կերաւ։

Ցեր. ժամը 1 և 41 րոպէին։ Բիւլետէն։ Գիշերն հիւանդը անցրեց անհանգիստ. տաքութիւնն է 37,2։ Թոքերը նոյն դրութեան մէջ են. սրտի գործունէութիւնը լուրջ երկիւղ է ներշնչում։ Մակովեցկի, Նիկիտին, Սեմեոնովսկի, Բերկենհէյմ, Ուսով և Շչուրովսկին։

Ցեր. ժամը 5 և 48 ր.։ Ցերեկով ուժեղ ուշաթափութիւն եղաւ, որ վերջացաւ բարեյաջող կերպով։ Հիւանդը գիտակցում է իր վտանգաւոր դրութիւնը։

Բեսարաբիայի եպիսկոպոս Իսիդորը և Իշխանուհի Կուրակինը դիմեցին Տօլստոյին խորհուրդ տալով հաշտվել եկեղեցու հետ։

Ժամը 6 և 40 ր.։ Տաքութիւնն է 37,9։ Ժամը 2-ին սիրտը զգալի չափով դանդաղեց 20 րոպէի չափ։ Երեկոյեան սրտի գործունէութիւնը լաւացաւ։ Գիտակցութիւնը պարզ է։ Շչուրովսկի, Ուսով, Բերկենհէյմ, Սեմեոնովսկի, Նիկիտին, Մակովեցկի։

Ժամը 9 և 30 րոպէ։ Դրութիւնը անփոփոխ է։ Բժիշկները երեկոյեան ժամը 6-ից դանվում են հիւանդի անկողնու մօտ։ Երկիւղը մնում է։ Շչուրովսկին և Ուսովը հիւանդի դրութիւնը գտնվում է շատ լուրջ. քիչ յոյս կայ։

Ցեր. ժամը 11 և 16 ր.։ Բժիշկները, մնալով հիւանդի մօտ երկու ժամ, հաղորդում են, որ շնչառութիւնը կանոնաւոր է և հանգիստ, զարկերակը աւելի լաւ է, դէմքը պարզվեց։ «Եթէ այսպէս շարունակվի երկու-երեք օր, —ասաց բժ. Նիկիտինը,— հնարաւորութիւն կը լինի խօսել առողջանալու մասին»։ Ուշաթափութիւնից յետոյ Տօլստոյը ասաց. «Աշխարհիս երեսին միլիոնաւոր մարդիկ կան, շատերը տառապում են. իսկ դուք բոլորդ ինչո՞ւ էք այստեղ մենակ ինձ մօտ»։ Այս րոպէին հիւանդը քնեց։

Ժամը 1 և 40 ր. գիշերվայ։ Նոր ուշաթափութիւն. դրութիւնը վտանգաւոր է։

Ժ. 1 և 48 րոպէին։ Ուշաթափութիւնից յետոյ Տօլստոյը քնեց։

Ժ. 1 և 55 ր.։ Դարձեալ ուշաթափութիւն ցերեկվայ նման. ընտանիքը ժողովվեց հիւանդի մահճակալի շուրջը։

Ժ. 3 և 26 ր.։ Տօլստոյին սրսկեցին մորֆիա։ Առ այժմ փոփոխութիւն չը կայ։

Ժ. 5 և 5 րոպէին։ Սիրտը յանկարծ վատ գործեց. դրութիւնը չափազանց վտանգաւոր է։

Ժ. 5 և 50 ր.։ Կոմսուհին թոյլատրեցին մտնել հիւանդի մօտ, բայց սա նրան չը ճանաչեց։ Հարևան սենեակումն է ամբողջ ընտանիքը։

Տօլստոյը վախճանվեց 6 ժամ 5 րոպէին։ (Հ. Գ.)

Աստապովո, 7 նոյեմբերի

Դպրոցական եկեղեցում կատարված հոգեհանգստին ներկայ էր այրին։ Եկաւ և մեկնեց Կալուգայի եպիսկոպոս Պարֆէնին։ Ասում են, որ Տօլստոյը ցանկութիւն է յայտնել թաղվել Եասնայա-Պոլեանայում այն տեղում, ուր երեխայ ժամանակ խաղում էր։ Դընացքը մարմնի հետ վաղը կուղարկվի Եասնայա-Պոլեանա ժամը 3-ին։ Այսօր եկան բազմաթիւ մարդիկ։ Կայարանում գտնվում են նահանգապետը և գծի կառավարիչը։ Կարգը օրինակելի է։

Տօլստոյի մարմինը գտնվում է սաւանի տակ։ Դէմքը չէ փոխվել։ Հանգուցեալը կարողացաւ յայտնել իր կամքը—թաղել առանց ծիսակատարութիւնների, պարզ կերպով, առանց պսակների և ծաղիկներ չը ցանել։ Մարմինը կը փոխադրվի Եասնայա-Պոլեանա Գօրբաչէվոյի վրայով։

Ժամը 9 և 40 րոպէին Տօլստոյի մարմնի մօտ ժողովրդին թոյլ տուին. դագաղի վերևում նստել է այրին։ Հանգուցեալի բարեկամները հարց են բարձրացրել ազգային սեփականութիւն դարձնել այն տնակը, որի մէջ վախճանվեց Տօլստոյը։ Սգի գնացքը բաղկանալու է երկու վագոններից և մի ապրանքային վագոնից, որի մէջ կը լինի դագաղը։ Հոգեհանգիստ չը կատարվեց։

Երեքշաբթի առ. ժ. 6-ին մարմինը կը փոխադրվի Զասէկա կայարանը և միևնոյն օրը հողին կը յանձնվի Եասնայա-Պոլեանայում։ Մարմինը լուսանկարվեց։ Սենեակում ժողովված հասարակութիւնը երգեց «յաւերժ յիշատակ»։

Այրին ստանում է բազմաթիւ ցաւակցական հեռագիրներ։ Զանազան անձերից և հաստատութիւններից դրրվել են մի շարք պսակներ։

Միլիոնաւոր մարդկանց մասին արտասանած խօսքը վերջին միտք պարունակող խօսքերն էին. յետոյ արդէն խօսակցութիւնը անհասկանալի էր։ Լուացումից յետոյ հանգուցեալին հագցրին իր սովորական տիպիքական զգեստը և կօշիկները։ (Հ. Գ.)

«Աղբիւր-Տարազի» խմբագրութեան հեռագիրը.

«Աղբիւրի» և «Տարազի» խմբագրութիւնը, խորապէս զգացված՝ ժամանակակից մտաւոր սերունդի փառք, պայծառ ոգու, անմահ Լէվ Տօլստոյի փառաւոր փոխանցմամբ, խոնարհում է մեծ մտքի, մարդու, գեղագէտների արքայի յիշատակի առաջ։

Խմբագիր Տիգրան Նազարեան, անդամ միջազգային մամուլի շաղկապի. համայն Ռուսիայի ընդհանուր լիագոր Լիսաբոնի միջազգային գրականութեան, արուեստի և խաղաղութեան Ճայսուն կոմիտէի։

ԼԷՎ ՆԻԿՕԼԱՅԵՎԻՉ ՏՕԼՍՏՕՅ

(Կենսագրական համառօտ գծեր)

I

Լէվ Նիկոլայեվիչ Տօլստոյը ծնվել է Տուլայի նահանգի ընդմիշտ յաւերժացած Եասնայա-Պոլեանա գիւղում 1828 թի օգոստոսի 28-ին։ Նրա հայրն էր պաշտօնաթող գնդապետ կոմս Նիկոլայ Իլիչ Տօլստոյ, իսկ մայրը՝ Մարիա Նիկոլայեվնան, որ նոյնպէս իշխանական ծագում ունէր. նա հարուստ իշխ. Նիկոլայ Վոլխոնսկիի աղջիկն էր։ Այսպէս՝ նա, որ ապագայում պիտի հանէր ծայրայեղ մուժիկասիրութեան, ծնվել է ժամանակակից ամենահարուստ արիստոկրատական ընտանիքներից մէկի մէջ։

Բազմամարդ էր այդ ընտանիքը—չորս արու և մէկ էգ զաւակ—և Լէվը չորրորդն էր նրա մէջ։ Ընտանիքը վաղ կորցրեց իր ծնողներին։ Լէվը մէկ ու կէս տարեկան էր, երբ մեռաւ մայրը և ինքը՝ երբ վախճանվեց հայրը։ Երեխաների կրթութիւնը իրանց վրա վերցրին հօրաքոյրերը, որոնք ի հարկէ շրջապատեցին մանուկներին գերմանացի և ֆրանսիացի դաստիարակներով, կրթում էին նրանց իրանց շրջանի հասկացողութեամբ։ Այսպէս՝ Իշխովա հօրաքոյրը, որի մօտ անցան Լէվի պատանեկութեան տարիները, անկեղծ հաւատացած էր, որ մարդ բաղդաւոր կեանք կունենայ միայն տիրանալով լաւ պաշտօնի—անպատճառ պալատական—և ունենալով մեծ հարստութեան, որ այն ժամանակ չափվում էր ճորտերի քանակութեամբ։

Պատանի Լէվը, հազիւ 15 տարեկան, ստանալով տնային կրթութիւն՝ մտնում է Կազանի համալսարանի այն ժամանակ գոյութիւն ունեցող արևելագիտական բաժինը (ուր ի միջի այլոց դասախօսում էր Ստեփաննոս Նազարեանը), բայց մի տարուց յետոյ, անաջող քննութիւնից յետոյ, անցնում է իրաւագիտական բաժինը, որը նոյնպէս կիսատ թողնելով 1847 թի սկզբում գալիս է իր Եասնայա-Պոլեանան, մտադրվելով անձամբ կառավարել իր կալուածքը։ Չը պիտի մոռանալ, որ դա ճորտատիրութեան ամենամռայլ ժամանակն էր. բայց պատանի կալուածատէրը ոգեորված էր ազնիւ, անիրագործելի գաղափարով՝ բաղդաւոր և բարգաւաճ տեսնելու իր գիւղացիներին։ Նա հիմնում է ուսումնարան, աշխատում է տնտեսապէս բարձրացնել գիւղացիների դրութիւնը։ Ի հարկէ կարճ միջոցում չէր կարելի լցնել այն խրամատը, վէհը, որ քաշել էր պատմութիւնը մուժիկի և տիրապետող դասակարգի միջև. և Լէվը Տօլստոյը հիասթափված թողնում է գիւղը և վճռում վերջացնել համալսարանը. այդ նպատակով նա անցնում է Պետերբուրգ, որտեղ աջող քննութիւններ է բռնում, բայց կիսատ թողնելով՝ կրկին վերադառնում տուն։ Այստեղ նա իր Սերգէյ եղբօր հետ վարում է բաւական զուլուս կեանք՝ որսորդութեան, քէֆի մէջ, թեթև կանանց շրջանում, թղթախաղութեան անձատուր եղած, մինչև որ բաւական քայքայում է և՛ առողջութիւնը, և՛ իր տնտեսականը, ստիպված լինելով պարտքերի դիմաց վաճառել կալուածքների մի մասը։

Կարտում բաւական խոշոր գումար տանուլ տալուց յետոյ՝ Լէվ Նիկոլայեվիչը 1851

թեին, զրված՝ իր վարած կեանքից, հեռանում է առանց որոշ ծրագրի Կովկաս և այստեղ, միաժամանակ վարելով խաղաղ կեանք բնութեան ծոցում, կոզակների պարզ շրջանում, վճռում է պաշտօնի մտնել։ Նոյն տարին Թիֆլիսում քննութիւն տալով առանում է Թնդանօթաձիգ օֆիցէրի աստիճան և մեր երկրում մնում է մինչև 1853 թուականի վերջը։ Այստեղից նա «Современникъ» ամսագրին ուղարկում է իր առաջին գրուածքը՝ «Детство»-ն, որը ի հարկէ տպագրվում է և իր վրա դրաձնում հասարակութեան ուշադրութիւնը։ Անշուշտ ստացած դաստիարակութիւնը, աննպատակ զեղխ կեանքը ստիպում են խոշոր մաքով օժտված երիտասարդին՝ պարզ, բնական կեանքում, շրջապատված ժողովրդի զանակ զինուորներով՝ աւելի խորասուզվել բարոյական հարցերի մէջ, որ կարմիր թելի պէս անցնում է նրա բոլոր գրական գործունէութեան միջից և ստեղծում նրա ուրոյն դերը ռուս գրականութեան մէջ։ Այդ տեսակէտից նա պատրաստ մարդ դուրս եկաւ գրականութեան մէջ՝ ժամանակով խորացնելով միայն իրաշխարհայեացքը։ Եւ Տօլստոյը իր «Утро помѣщика», «Люпернъ», «Казаки» և այլ գրուածքներում և «Воскресенье» վէպում միևնոյն աշխարհայեացութեան մարդն է, թէև մենք չունենք մի ամփոփ գրական տեսութիւն այս ուղղով կատարած։

Երբ սկսվում է Ղրիմի պատերազմը, Տօլստոյը խնդրում է իրան փոխադրել Կովկասից կռի եւրօպական թատերաբեմը, և 1854 թ. նա տեղափոխվում է Դանուբի ափը, իսկ այս տեղից Սեվաստոպօլ, որի պաշտպանութեանը մինչև վերջը նա մասնակցում է, տալով չը տեսնված պարզութեամբ գրված պատերազմական պատկերներ։ Խաղաղութիւն կապելուց յետոյ՝ մենք Տօլստոյին տեսնում ենք Պետերբուրգի առաջնակարգ գրական շրջաններում, արդէն ճանաչված որպէս խոշոր ինքնուրոյն տաղանդ։ Էստէտիք չը ճանաչված կրիտիկոս Նիկոլայ Չերնիշեվսկին տալիս է նրա տաղանդի առաջին քարակտերիստիկան, գուշակելով նրան խոշոր և գեղեցիկ ապագայ։

Պաշտօնաթող Տօլստոյը 1856 և 57 թուականներին Ղմայրաքաղաքներում վարում է անփոյթ, անգամ նոյն զեղխ կեանքը, ընդմիջված գրական աշխատանքներով, և 1857 թուին կատարում է կարճատև ճանապարհորդութիւն Եւրօպայում։ Այդ ճանապարհորդութիւնը, բայց աւելի երկար միջոցով, նա կրկնում է 1860 թուին, սակայն արդէն որոշ նպատակով՝ ծանօթանալ դաստիարակութեան, ուսումնարանական գործի հետ։ Եւ վերադառնալով Եասնայա-Պոլեանա հիմնում է ժողովրդի համար ուսումնարաններ, հաւաքելով իր շուրջը երիտասարդ ոյժեր (դրանց թւում էր և Գլէբ Ուսպէնսկին) և տաք կպչելով գործին, հրատարակելով իր նշանաւոր մանկավարժական ամսագիրը։

Ճորտերի ազատութեան տարին Տօլստոյը մտնում է հաշտարար միջնորդների շարքը և մօտ 3 տարի մնալով այս պատուաւոր պաշտօնում՝ աւելի խորացնում իր ծանօթութիւնը ռուս հասարակ ժողովրդի հետ։ Բայց ժամանակ առ ժամանակ նրա մէջ արթնանում է հին մարդը, կրկին հանդէս են գալիս քէֆը, կարտը, կանայք, որից ազատում է նրան մաքուր սէրը դէպի այն խելօք, սիրուն կոյսը, որի հետ 1862 թուի սեպտեմբերի 23-ին նա կապվում է ամուսնական կապով։ Այդ կոյսը գերմանացի բժիշկ Բերսի Սոֆիա Անդրէեվնա աղջիկն էր։ Հետզհետէ բազմացող խաղաղ ընտանեկան շրջանում Տօլստոյը անձնատուր է լինում բեղմնաւոր գրական աշխատանքի մինչև 1870-ական թուականների կէսը։ այդ շրջանին են պատկանում նրա հրաշակերտ «Война и Миръ»-ը, «Анна Каренина»-ն, «Семейное счастье» գրուածքները։ Բայց բարոյական հարցերը դադար չեն տալիս մտքի այս հսկային, և նա, թողնելով առ ժամանակ զուտ գեղարուեստը, սկսում է ուսումնասիրել կրօնների ծագումը, նրանց պատմութիւնը, քրիստոնէութիւնը, յատկապէս ուսումնասիրում է հրէական և յունական լեզուները, թարգմանում Աւետարանը և սկսում իր «չարին դէմ չը կանգնել» քարոզը, որ վաստակում է նրան և ջերմ հետևողներ՝ գլխաւորապէս ժողովրդական շրջաններում, և ջերմ հակառակորդներ ինտելիգենտ շրջաններում, որոնք այս քարոզի մէջ տեսնում էին ռեակցիոն սկզբունք։ Տօլստոյը առաջադիմութիւնը տեսնում է միայն մարդկանց բարոյական վերածնութեան մէջ, խաղաղ երկրագործական աշխատանքին նուիրված, իսկ հակառակորդները չը ժխտելով բարոյական սկզբունքը մատնացոյց են անում հասարակական կարգերը, առանց որոնց փոփոխման անհնար է մարդկութեան վերածնութիւնը։ Բայց մեծ գրողը ընթանում է իր ճանապարհով և վերաբերնում իր տեսակէտից և՛ կրօնը, և՛ գիտութիւնը, և՛ կնոջ կոչումը, և՛ գեղարուեստը, և՛ քաղաքատնտեսութիւնը, պետական-ընկերական կեանքը, միշտ թարմ, թէև միակողմանի, միշտ փնտռող, միշտ ցնցող, երբեմն պարզաբանելով իր ուսումը գեղարուեստական խոշոր գրուածքներով, որտեղ սակայն տենդենցիան չէ յաղթանակում գեղարուեստին («Իվան Իլիչի մահը», «Լուսաւորութեան պտղները», «Տէրը և ծառան», «Յարութիւն», «Կրէյցերեան Օնատան», «Ինչու համար» և այլն)։ Այս շրջանի բեղմնաւոր գործերից մէկն էլ լինում է ժողովրդական գրականութեան զարկ տալը, «Посредникъ» ֆիրմայի հիմնադրութիւնը՝ որի համար Տօլստոյը գրեց իր բազմաթիւ անպաճոյճ, բայց գեղարուեստական պատմութիւնները։ Նոյն գործին զարկ տալու համար նա հրաժարվեց իր վերջին շրջանի գրուածքների սեփականութեան իրաւունքից, որին հետևեցին Վ. Կորոլենկօն, Մաքսիմ Գորկին և ուրիշները։ Լէվ Տօլստոյի համբաւը իբրև մտածողի աւելի մեծ էր, սակայն ոչ իր հայրենիքում, այլ անգլօ-սաքս աշխարհում, որը աւելի խաղաղ, բարեկեցիկ կեանքում աւելի առիթ ունի զբաղվել բարոյական հարցերի խորը քննութեամբ և որտեղ ազատ շրջանառում էին նրա գրուածքները, դեռ արգելված՝ մեծ մտածողի հայրենիքում։

Զ.

ԿԱՐՍԻ ՀԱՆԴԷՍՆԵՐԸ

—

Կարս, 6 Նոյեմբերի

Զինուորական ժողովարանում Փոխարքայի ներկայութեամբ կօմենդանտը կարդաց Կայսրի հեռագիրը, որ ընդունվեց ուռաներով և հիմնով, և Մեծ Իշխան Նիկոլայ Միխայլովիչի հեռագիրը։

Գիշերվայ ժամը 1-ին Փոխարքան և էկզարխը մեկնեցին Թիֆլիս։ Հանդէսները վերջացան։ (Հ. Գ.)

—

Կարս, 6 Նոյեմբերի

Զինուորական ժողովարանում, հոգեհանգստից յետոյ, գեներալ Պոտտօն դասախօսութիւն կարդաց Կարսի չորս յարձակումների մասին։ Ներկայ էին Փոխարքան իր ամուսնու հետ և Վրաստանի էկզարխը։ Դասախօսը շնորհակալութիւն յայտնեց Փոխարքային՝ գեներալ Նեվէտաէվի մարմինը Կարս փոխադրելու թոյլտուութեան համար։

Հանդէսը բացվեց բոլոր եկեղեցիներում պատարագ մատուցանելով։ Զինուորական տաճարում պատարագիչն էր էկզարխը։ Պատարագից յետոյ տաճարից սկսվեց եկեղեցական թափօր դէպի արձանը։ Նրան միացան միւս եկեղեցիների եկեղեցական թափօրները։ Երթին մասնակցում էին 28 քահանաներ։ Եկեղեցական թափօրը «Հրեշտակ զուարթուն» սգերգի հնչիւնների տակ անցաւ շարքերով կանգնած զօրքերի միջով։ Երբ բոլորը հասան արձանին, զօրքերը շարժվեցին դէպի նա և տեղեր դրաւեցին արձանի բոլորքը եղբայրական դամբարանների մօտ։ Կէսօրվայ մօտերը լսվեց զօրահրամանատարի հրամանը՝ «զէնքերը առ»։ Երաժշտախումբը նուագեց ազգային օրհներգը։ Արձանը ծածկող ծածկոցը իջաւ։ Մաղթանքից յետոյ, որի ժամանակ արևշատութիւն մաղթվեց Կայսերական Տանը և յաւերժ յիշատակ երգվեց Նիկոլայ I, Ալէքսանդր II Կայսրներին, Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչին և Կարսը առնելու օրերում ընկած բոլոր զինուորականներին, թնդանօթների պարպումի և զանգակների զողանջիւնների տակ էկզարխը սուրբ ջուր սրսկեց արձանի վրա։ Նրա լանջի վրա բազմաթիւ պատգամաւորութիւնները դրին արծաթէ պսակ ժապաւէններով։ «Հրեշտակ զուարթունի» հնչիւնների ուղեկցութեամբ եկեղեցական թափօրը վերադարձաւ։ Սկսվեց զօրահանդէս. զօրքերը քայլերթով անցան արձանի առջևից։ Հրամայում էր Փոխարքան՝ շրջապատված բազմամարդ շքախմբով։ Հանդէսը, որին նպաստում էր գեղեցիկ եղանակը, վերջացաւ կրթական հաստատութիւնների զօրախմբերի քայլերթով։ Զինուորական ժողովարանում կայացաւ նախաճաշ, որին ներկայ էին հանդիսին հրաւիրված բոլոր անձինք և օֆիցէրները։ Զինուորների համար զօրանոցներում եղան զօրախաղեր։

Նախաճաշին Փոխարքան առաջին բաժակը առաջարկեց խմել ռուսական զօրքի Գլուխ՝ Թագաւոր Կայսրի կենացը, որպիսի կենացը ծածկվեց եռակի ուռաներով և ազգային երգով։ Երկրորդ բաժակը Փոխարքան առաջարկեց կովկասեան պանծալի զօրքի կենացը, որ չը գիտէ յետ նահանջել և անձնատուր լինել։ Կօմենդանտը բաժակ առաջարկեց կովկասեան զօրքի պարագլուխ Փոխարքայի կենացը։ Կենացները հետևեցին միմեանց։ Առանձին ոգևորութեամբ խմվեց էկզարխի, Կովկասի զօրքի, նահանգապետի և Փոխարքայի առողջութեան համար առաջարկված կենացները, Փոխարքայի, յանձին որի ազգաբնակութիւնը գտաւ մի կառավարչի, որ յարութիւն առնել տուեց ժողովրդական յիշողութեան մէջ Կովկասին քաջ յայտնի Իշխան Վորոնցովի տրադիցիաները։ Երեկ. ժամը 8-ին կօմենդանտի մօտ տեղի ունեցաւ ճաշ բարձրատիճան զինուորական պաշտօնեաների համար։

(Հ. Գ.)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Պետերբուրգ, 6 Նոյեմբերի

Ցարսկոէ-Սէլօյում Նոցին Մեծութիւնների ներկայութեամբ տեղի ունեցաւ հուսարական պալատական զընդի զօրադիտում։ Մաղթանքից յետոյ Կայսրի առաջից դուռնը անցաւ քայլերթով։ Զօրանդիսից յետոյ Կայսրը մտաւ գնդի սրահը և խմեց գնդի կենացը։

Ծովային կօրպուսի ռոնի առիթով Կայսրը ուղարկեց շնորհաւորական հեռագիր։ Երեկոյեան կօրպուսի շինութեան մէջ տեղի ունեցաւ շքեղ պարահանդէս, որին ներկայ էին 7000-ից աւելի հրաւիրված անձեր։ (Հ. Գ.)

—

Շուլավէր, 7 Նոյեմբերի

Օծվեց ս. Դէորգի եկեղեցին Փոխարքայի և Վրաստանի էկզարխի ներկայութեամբ։ (Հ. Գ.)

—

Վիէննա, 6 Նոյեմբերի

Էրենտալը ճաշ տուեց ի պատիւ հեռացող դեսպան իշխան Ուրուսովի։ Ներկայ էին դեսպանատան և արտաքին գործերի մինիստրութեան պաշտօնեաները։ (Հ. Գ.)

—

Վիէննա, 7 Նոյեմբերի

Պատգամաւորութիւնների նստաշրջանը փակվեց։ Աւստրիական և ունգարական մինիստրների խորհուրդը Էրենտալի նախագահութեամբ որոշեց 1911 թուի ընդհանուր բիւջէն։ Ծննդից յետոյ կը բացվի պատգամաւորութիւնների նոր նստաշրջանը ժամանակաւոր դուժարայատկացումները քննելու համար։ (Հ. Գ.)

—

Պրագա, 7 Նոյեմբերի

Չեխ-գերմանական բանակցութիւնները վերջնականապէս կանգ առան։ Չեխ կուսակցութիւնները պատրաստակամութիւն յայտնեցին վերսկսել բանակցութիւնները վերջում, եթէ այդ ցանկանան գերմանացիները։ (Հ. Գ.)

—

Զագրէբ, 6 Նոյեմբերի

Արդարադատութեան պետ Արանիցկին պաշտօնանկ եղաւ։ Դրանում տեսնում են կօալիցիայի զիջումների քաղաքականութիւն։ (Հ. Գ.)

—

Պարիզ, 7 Նոյեմբերի

Ֆալիէրը Տիլէրում բացեց Ժիլ-Վէրնի արձանը։ Բրիանը ճառ արտասանեց, որով ասաց, որ քաղաքական տեսակէտից ներկայ հանդամանքները նման են նրանց, որպիսիները Ֆէրրիի ժամանակն էին. չը նայած աջակողմեանների և ձախակողմեանների կատաղի դիմադրութեան, Ֆէրրին Ֆրանսիային վերադարձրեց իր պրէստիժը։ (Հ. Գ.)

—

Պարիզ, 6 Նոյեմբերի

Պալատն ընդունեց արդարադատութեան մինիստրի բիւջէն. մահվան պատժի գործադրութեան համար յատկացված գումարն ընդունվեց 393 ձայնով ընդդէմ 156-ի։ Զեկուցանողը գտաւ, որ մահվան պատժի հարցը պէտք է քննել բիւջէից առանձին։

Ֆրանսիայի շատ տեղերում հեղեղներ և ձիւնախառն փոթորիկներ են։ Հաղորդակցութիւնը ընդհատված է։ Գետերը բարձրանում են։ (Հ. Գ.)

—

Լոնդոն, 6 Նոյեմբերի

Ակվիտը Նացիոնալ-լիբերալների կլուբում ճառ արտասանեց, որով մատնանշեց, որ հասել են այնպիսի պայմաններ, որոնք մինչև օրս չեն համապատասխանել բրիտանական սահմանադրութեան պատմութեանը. 1906 թ. ընտրված ստորին պալատը սիստեմատիկ կերպով անդամահատեց վերին պալատը, 1910 թ. ընտրվածը 100 ձայնի առաւելութեամբ որոշեց սահմանափակել վերին պալատի իրաւունքները. veto ի իրաւունքի կօնֆերէնցիան աջողութեամբ չը պսակվեց։ Ակվիտը կարծում է, որ քաղաքային վիճակներում ընտրութիւնները կարող են աւարտվել դեկտ. 7-ին, շինական շրջաններում՝ դեկտ. 17-ին. դա աւելի լաւ է, քան թէ յետաձգել Ծնունդից յետոյ. լորդերի պալատի իրաւասութիւնը պէտք է սահմանափակվի երկրորդական ֆունկցիաներով։ (Հ. Գ.)

—

Մոսկվա, 6 Նոյեմբերի

Բացվեց թաղնապահութեան համառուսական ցուցահանդէս։ (Հ. Գ.)

—

Վարշավա, 7 Նոյեմբերի

Եկան և մեծ շուքով ընդունվեցին Դումայի հոկտեմբերեան և նացիոնալիստ անդամներ՝ Եւլոգիյ եպիսկոպոսը, Բալաշովը, Պոլվցէվը, Պոտոցկին, Լադոմիրսկին, Անանիէվը։ (Հ. Գ.)

—

Մոնտեվիդէօ, 6 Նոյեմբերի

Կառավարութեան և ապստամբների միջև հաշտութիւնը վերականգնվեց։

(Հ. Գ.)

—

Մէկսիկա, 7 Նոյեմբերի

Այստեղ, Պուէբլօյում և ուրիշ քաղաքներում հանդիստ է։ Անկարգութիւնների ժամանակ սպանվեցին 170 մարդ, նաև ոստիկանապետին սպանող կինը։ Ձերբակալված են 42 մարդ՝ անկարգութիւններին մասնակցելու համար։ (Հ. Գ.)

—

Մէկսիկա, 6 Նոյեմբերի

Պուէբլից հաղորդում են, որ միտինգից յետոյ մի կին ատրճանակով սպաննեց ոստիկանապետին։ Ցուցարարները ձեռնամարտ սկսեցին ոստիկանների հետ։ Նետված ռումբից սպանվեցին մի քանի ոստիկաններ։ Մէկսիկայից կանչված զօրքերի համազարկերից յետոյ կարգը վերականգնվեց։ Պաշտօնական տեղեկութիւնների համաձայն՝ սպանվել են 18, մասնաւոր տեղեկութիւնների համաձայն՝ 100 մարդ։

(Հ. Գ.)

ԹԻՒՐԲԻՆ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

—

Թաւրիզ, 6 Նոյեմբերի

Քօշանում քիւրդերը սպանել են ուրմիական ժանդարմերիայի կառավարիչ Այդին-փաշային, չորս ժանդարմի, 16 ձիաւորների, մի քանի շինականների և հեռագրական ծառայողին, որ փորձել է վերականգնել հեռագրութիւնը։ Զօրամասի հրամանատարի զեկուցումից երևում է, որ քիւրդերը ունեցել են մեծ կորուստներ։

Սամայի քիւրդերը պաշարել են Կուշչի, Իմամքենդ և Զեբէլ գիւղերը։ Կռիւը տեղի է ունենում երեք ֆրօնտի վրա։ Նահանգապետից ուղարկված օգնութիւնը շատ քիչ է։ Շինականները կռուում են կատաղի կերպով։ Ռուսական մի քանի ապրանքներ մնացել են Զեբէլի ճանապարհին։ (Հ. Գ.)

—

Կ. Պոլիս, 6 Նոյեմբերի

Հրատարակվեցին «Մ. և Ա.» կուսակցութեան Սալոնիկի համագումարի որոշումները։ Որոշված է ձեռնպահ մնալ և չը միջամտել արտաքին ու ներքին քաղաքականութեանը, յանձնել կուսակցութեան քաղաքական ծրագրի գործադրութիւնը կոմիտէի պարլամենտական ֆրակցիային, կենտրոնական և տեղական կոմիտէների գլխաւորը խնդիրը դարձնել ժողովրդական կրթութեան զարգացումը և ժողովրդի մէջ սահմանադրական գաղափարի տարածումը։ (Հ. Գ.)

ՊՕԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

—

Կ. Պոլիս, 24 հոկտեմբեր

Մեր ընդհանուր ժողովը, երեքսեսուդարտէ մը ետքը, իր առաջին նիստը գումարեց երկու օր առաջ, 22 հոկտեմբերի, ուրբաթ օր։

Ժողովը, ստացած հրաւիրագիրներու համաձայն, պիտի զբաղէր այդ նիստի մէջ միմիայն վարչութեան հրաժարականի հարցով։ Եւ ահա պատրիարքին ալ հրաժարագիրը մայր դիւանի ուղղուած։

Վարչութեան հրաժարագիր.—Այդ մասին արդէն ժողովականներու մէջ գոյութիւն ունէր երկու որոշ հոսանք, հիշդ ինչպէս, օրեր առաջ, երևան եկած էր թերթերու մէջ։ Մէկ մասը ուզեց դիտել տալ, թէ վարչութիւնը իր պաշտօնավարութեան համար երկու or պայմանաժամ ունէր, որով ինքնին դադարման դատապարտուած էր օրէնքին բացայայտ արամադրութիւնովը. և իրեն կը մնար, առ առաւելն, յուշարարի դեր մը միայն կատարել, թէ իր վախճանը հասած է։ Ուստի, համարատուութիւն և ոչ թէ հրաժարագիր։

Վարչութեան պաշտպան մասը կառարկէ, թէ վարչութիւնը ունի տակաւին տարի մը ևս պաշտօնավարութեան համար, ուրովհետև իր ընտրութիւնը կատարուած է մէկ տարի առաջ, որով հարկ է իր հրաժարականը նկատել իբրև հրաժարական ու ըստ այնմ անոր վրայ վիճաբանիլ։

Ստոր բոլորովին հակառակ ըլլալով, կըսուի թէ վարչութիւնը թէև մէկ տարի է, որ պաշտօնի վրայ է, բայց ինքը շարունակութիւնն էր իր նախորդին որ մէկ տարի պաշտօնավարած էր արդէն, այնպէս որ վերակազմեալ վարչութիւն մը եղաւ, քան թէ նոր վարչութիւն մը, ու ապացոյցն ալ սա է, որ վարչութեան մէջ իբրև անդամ գտնուեցան այնպիսիներ, որոնք նախորդին ժողովականներն էին։

— Լաւ, կառարկուի։ բայց պէտք է գիտնալ, թէ վարչութեան ընտրութիւն կատարուած աեեն՝ դիտողութիւն եղած էր այդ մասին, և ժողովը համաձայն գտնուած, որ վարչութիւնը երկու տարի պաշտօնի մէջ գտնուի։ Ի՞նչպէս կարելի է հակառակ գտնուիլ այդ տրուած որոշումին։

— Որոշումը թէև ստոյգ է որ մեծամասնութեամբ եղած է, բայց և այնպէս այդ «մեծամասնութիւնը», օրուան հոսանքէն տարուելով, ուղղակի դէմ քալեց օրէնքի մեկին տրամադրութեանը։ «Ձայներու առաւելութիւնը», երբ այսքան ակներևաբար կը դասէ օրէնքին, իր որոշումը չունենար օրինական ուժ։ Օրինակ, ըստ Գ. Զոհրապի բացատրութեան, 2+1=3 անհերքելի ճըշմարտութիւնը չի դադրիր անժխտելի իրողութիւն ըլլալէ, թէև «մեծամասնութիւնը» կը պնդէ թէ 2+1=2 արդիւնք կուտայ։ Այդպէս եղած էր ժողովի «մեծամասնութեան» քուէներու առաւելութիւնը։ Պէտք է նաև գիտնալ, թէ կայ օրինական ուրիշ տրամադրութիւն մը ևս, որով ընդհանուր ժողովը կրնայ անդրադառնալ իր տուած մէկ որոշումին վրայ, երբ անցած է երեք ամիս։ Ու հիմա որ տարի մը անցած է, ոչ թէ երեք ամիս, ինչ հարկ կայ օրէնքը բռնաբարել ի՞նչ ճշմարտութեան, մասնաւանդ աւելի լաւ չէ՞ դարմանել յայտնի սխալ մը։

Ինչպէս կը տեսնուի, վարչութիւնը ոչ թէ հրաժարագիր, այլ իր դադարումին ծանուցագիրը բերելու էր ընդհ. ժողովին, ինչպէս ըրած էր կրօն. ժողովը։

Վարչութեան ատենապետը նոյն առթիւ բացատրական նամակ մը ևս գրած էր դիւանին, որով կը մանրամասնէր կարգ մը իրողութիւններ, որոնք մեծ արգելք եղած էին իբրև թէ վարչութեան ամուլ շրջանին։ Իրերու ժամանակն հետևողներու շատ որոշ է, թէ այդ բացատրական թուղթը եթէ ոչ տղայական, խակութեան ապացոյց մըն է, և կամ թերևս աճապարանքի գործ մը։ Անշուշտ ողջամիտ մարդիկ ծիծաղելի պիտի գտնէին զայն, տեսնելով որ վարչութեան ատենապետը դէպքեր խճողած է իր նամակին մէջ ու այնպիսի ժամանակագրական կապեր դրած, որոնք յայտնապէս սխալ են։ Օրինակ, կըսէ, թէ վարչութիւնը ստիպուեցաւ եկեղեցիներու դուռները փակել ուսիցէ գումարումի առնչ, երբ տեսաւ թէ Այնթապը կը բողոքէ, Շարին-Գարահիսարի եկեղեցիին կամարը ծակուած էր ներս մտնելու, Իզմիրի մէջ սպանութիւններ տեղի ունեցան։ Փոխանակ ըսելու թէ՝ երբ եկեղեցիներու դուռները փակելու ջանքեր եղան, երբ ոստիկանական ուժ գործ դրուեցաւ եկեղեցիին մուտքը արգիլելու, տեղի ունեցան դէպքեր, որոնք ապացոյցներ էին, թէ չպիտի կրնար վարչութիւնը փակել եկեղեցիին դուռները։ Այդ ըմբռնումով գրուած թուղթ մը ողջամտութեան հաւատիք չէր բերեր։ Զարմանալի է այժմ մեր գործողներու հոգերանութիւնը. մէկ օրէ միւսը այնքան փոփոխութիւն կունենան, որ հեռագրեմ դժուարին պիտի ըլլայ որոշ եզրակացութեան մը գալ այս կամ այն անհատի վերաբերութիւնով։

Պատրիարքը կը գրէ դիւանին.

«Հազիւ 17 ամիսներ անցան՝ յոլովեհետ ազգ. երեսփ. ժողովը կոչեց զիս Կ. Պոլսոյ պատրիարքական պաշտօնին։ Հպատակելով ազգի ձայնին, բարձրացայ այն աթոռը, որու երբէք ցանկացած չէի և զոր չէրցայ փառաւորել ըստ արժանւոյն։

«Այժմ զայն թողելու հաստատ տրամադրութեամբ կը մատուցանեմ այս հրաժարականս՝ ցաւ ի սիրտ խոստովանելով

«Թէ՝ հակառակ փանաքի ճիգերուս՝ կարող չեղայ պաշտօնական յարաբերութիւններով բազմակարօտ հայ ժողովուրդին ամենակենսական պէտքերուն ու պահանջումներուն գոհացում տալ՝ բաղձացուած չափերով,

«Թէ՝ բացարձակապէս ամեն կուսակցութիւններէ վեր մնալով հանդերձ՝ անկարող եղայ մեր ազգային ներքին կեանքը ակընայայտի փճացնող ընդդիմադիր ուժերը հրաւիրել հաշտ ու համերաշխ գործակցութեան,

«Եւ թէ վերջապէս՝ ազգ. իշխանութիւնը իր բարոյական դերքին բարձրութեանը մէջ միայն ըմբռնած ըլլալու միամտութիւնս օգտակար արդիւնք մը չունեցաւ ինքնին։

«Կաղաչեմ ուրեմն, տեարք երեսփոխանք, որ, ընդունելով իմ հրաժարականս, զերծ կացուցանէք զիս իմ վրայ դրուած այս ծանր լուծէն, ի սէր այն ժողովուրդին, որու համար աղօթող եմ միշտ»։

Ժողովը, միմիայն զբաղած ըլլալով վարչութեան հրաժարագրի մասին, ժամանակ չունեցաւ, կարծիք յայտնելու պատրիարքի հրաժարագրի համար։ Միայն երեսփոխան մը, Վահան Թէքէեան, առիթ գտաւ տրամադրելու, թէ պէտք է ընդունիլ պատրիարքին հրաժարականը։

Նոր բան մը չէր առ. շաբաթէն աւելի էր, որ «Արևելք», «Ժամանակ», «Բիւզանդիոն» իրենց ռազմական յարձակումները սկսած էին պատրիարքի դէմ։ Թերթերու այդ ուղղութեանը համակարծիք երեսփոխաններ ալ ունինք. կասկած կայ, թէ գուցէ մեծամասնութիւն գոյանայ երեսփոխանութեան մէջ։

Պատրիարքը քիչ մը աճապարանք ցոյց տուաւ։ Ստոյգ է թէ բեղուն շրջան մը չէ, որ Դուրեան պատրիարք կը թողու իր ետեւը պատրիարքական աթոռի վրայ, բայց և այնպէս նոր շրջան մը, նոր ըմբռնումներու և հին ըմբռնումներու հակառակամարտ բաղխումները, նոր պահանջներ, ատոնք փաստեր են արդէն, որ մեծ դժուարութիւն պիտի ունենար ազգ. իշխանութիւնը իր առնչ։ Թողուլ մեկնիլը՝ փրկութեան միջոց չէ. ատ է, որ, կարծեմ, պատիւ չպիտի բերէ Դուրեանի։

Ցոյս ալ կայ, որ յաջողուի մերժել պատրիարքի հրաժարականը։ Թող որ արժանաւոր պատրիարքցու չունենք, ինչպէս գրուած է. ազգը պիտի զրկուի օգտուիլ այն փորձառութենէն, որ անշուշտ ձեռք բերած ըլլալու է Դուրեան՝ պատրիարքական աթոռի վրայ։

Դիտելի պարագայ մը սա եղաւ, որ ժողովը խաղաղ նիստ ունեցաւ. մինչ դուրսը ոստիկանական միջամտութիւն մը՝ խրոնուած հետաքրքիրներու մէջ տեղի տուաւ ձերբակալութեան, սուիններ մերկացնելու։ Ամիսներէ ի վեր, գոնէ դասակարգի մը մէջ, մեծ ցանկութիւն կայ ոստիկանական

սուին ցցել ժողովուրդի աչքին առջև։ Ա-ռաջին փորձով յայտնի եղաւ, թէ սխալ է այդ ուղղութիւնը։ Շահէն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍՈՒՄ

—

Շքեղ էր նոյեմբերի 7-ի հանդէսը Շուլավէրում։

Նրան այցելեցին կովկասեան Փոխարքան իր ամուսնու հետ, Վրաստանի էկզարքոսը, բազմաթիւ պաշտաւորոյ հիւրեր Թիֆլիսից և ներկայացուցիչներ Բօրչալուի գաւառի զանազան մասերից։

Շուլավէրը այդ օրը հանդիսաւոր կերպով քաց էր անում իր ջրանցքը, որը ահա մի տարի է ինչ տալիս է մաքուր և առողջաբար ջուր Շուլավէրին, բայց դեռ չէր աւարտած վերջնականապէս իր բոլոր մասերով։ Այդ օրը օծվում էր և նորակառոյց ուղղափառ եկեղեցին։

Շուլավէրը հանդիսաւոր տեսք էր ստացել արդէն նախորդ օրը։ Շինվում էր հոյակապ յաղթական կամար, կանգնեցվում էին նոր բազմալոյս նաւթջեռ լապտերներ, հարթվում էին խորտուբորտերը, մաքրվում էին և զարդարվում փողոցները։

Փոխարքայի գալուստը սպասվում էր աւուտուան ժամը 10-ին։

Գիւղական հասարակութիւնը պատրաստվել էր մատուցանելու Փոխարքային աղ ու հաց յաղթական կամարի տակ։

Աղ ու հացը զետեղված էր մի զեղեցիկ խորշրդաւոր սկուտեղի վրա։ Սկուտեղը շինված էր ընկոյզի կինեմօնագոյն փայտից։ Նրա կենտրօնում փորագրված էր հայ գիւղացի, որ բռնել է գութանի մաճը և հերկում է հողը։ Գութանը հին հայկական է։ Սկուտեղի ձախ կողքին փորագրված է եկեղեցի, որը կարող է նշանակել կամ էջմիածինը կամ Հաղբատը։ Դէպի աջ փորագրված են երկու լեռներ, որոնք յիշեցնում են Մասիսները, բայց կարող են վերաբերվել նաև Բօրչալուի Լալուար և Էջեան լեռներին։

Գիւղական հասարակութեան ներկայացուցիչների կողքին կանգնած էին զանազան տեղերից եկած ներկայացուցիչներ, այնուհետև զարդացական աշակերտները երկար շարքերով։ Փողոցների կողքերին շարված էին բազմաթիւ հանդիսականներ գիւղացիներից։ Պատշգամբներում և կտուրների վրա զետեղված էին հետաքրքրվողներ։

Հայկական զուռնան և գերմանական երաժշտական խումբը տեղաւորված էին աջից ու ձախից։

Ժամը 11-ին սկսեցին մօտենալ բարձրաստիճան հիւրերը։

Նախ անցաւ էկզարքոսը, որը շտապում էր ժամերգութիւնը վաղօրօք կատարելու, որպէս զի հանդէսը կարողանայ ժամանակին աւարտվել։ Էկզարքոսին ընդունեցին ուռաներով։

Մի քանի ժամանակից յետոյ երևաց Փոխարքայի կառքը։

Դարձաց գոռ ուռա, որ կրկնվեց մի քանի անգամ։

Յաղթական կամարի տակ իջաւ Փոխարքան և ողջունեց։

Գիւղական տանուտէրը մատուցեց սկուտեղը աղ ու հացով և բարի գալուստ մաղթեց, յայտնելով գիւղի բերկրանքը բարձր հիւրի գալստեան պատճառով։

Փոխարքան շնորհակալութիւն յայտնեց և հաց ու փորձ արեց գիւղի կազմութեան և հանգամանքների մասին։

Գիւղական կանանց կողմից մի հայուհի տիկին մատուցեց սպիտակ վարդերից կազմված մի զեղեցիկ փունջ Փոխարքայի ամուսնուն, որ իջաւ կառքից և սկսեց մօտենալ պատգամաւորութիւններին։

Փոխարքան և ամուսինը հետաքրքրվեցին աշակերտներով և հաց ու փորձ արին զարդացների կազմի, աշակերտների թիւ, ուսման ընթացքի մասին։

Այնուհետև նստեցին նորից կառք և ուռաների աղաղակների տակ գնացին գաւառապետի բնակարանը։

Մի փոքր հանգստանալուց և պատգաւորութիւններ ընդունելուց յետոյ գնացին նոր օծվող եկեղեցին, իսկ այնտեղից դէպի Ջրամբարը։

Էկզարքոսը, ուղղափառ և հայ հոգևորականութիւնը զգեստաւորված շրջապատեցին Ջրամբարը և կատարեցին օրհնութեան կարգը։

Երկինքը, որ մինչև այդ ամպատած էր, բացվեց և արեգակը սկսեց զգալի կերպով տաքացնել։

Հաճելի էր տեսարանը։

Ջրամբարից, որ գտնվում է բարձր տեղում, բացվում էր գիւղը իր շրջակայքով։ Ջրամբարի մօտ և լեռնակողերում խռնված էր բազմութիւն գոյնզգոյն զգեստներով, զանազանակերպ տարազներով։

Օծումից յետոյ Փոխարքան հիւրերի հետ միասին գնաց գաւառապետի բնակարանը, ուր պատրաստված էր սեղան։

Այդտեղ էին ռուս և հայ հոգևորականութիւնը, Թիֆլիսի նահանգապետը, ազնուականութեան պարագլուխը, զինուորական մասի ներկայացուցիչները, Ջրանցքի շինութեան կոմիտէի անդամները, զանազան տեսակների ներկայացուցիչներ, «Մշակի» խմբագիր և Հայ Գիւղատ. և Տնայն. Ընկ. նախագահը, բազմաթիւ հիւրեր։

Առաջարկվեցին կենացներ՝ Կայսերական ընտանիքի, Փոխարքայի և նրա ամուսնու, էկզարքոսի, հոգևորականութեան, նահանգապետի և հիւրերի։

Ա. Քալանթարի խօսքը մի ճառ, որի համառօտութիւնը բերում ենք ներքև։

Վերջում Փոխարքան յայտնեց իր շնորհակալութիւնը շուլավէրցիներին և ասաց, որ նա ցանկանում է իրագործված տեսնել այն ծրագիրը, որ ուրուագծված է Ա. Քալանթարի ճառում։ Նա յորդորեց շուլավէրցիներին այն ինքնագործութեամբ, որով նրանք պատուով իրականացրել են Ջրամբարը, ձեռնարկել նաև միւս հերթական կարիքների բաւարարութեան գործին, և իր կողմից խոստացաւ ցոյց տալ աջակցութիւն, որքան կախված կը լինի այդ իր կողմից։

Այնուհետև Շուլավէրի հայ կանանց կողմից մատուցվեցին գործուածքներ կոմսուհուն, իբրև նուէր, որը նա ընդունեց, գովելով աշխատանքը և նրա կատարումը։

Ճաշկերոյթի ժամանակ նուագում էր զինուորական երաժշտախումբ և երգում էր Փոխարքայի կօզակների երգեցիկ խումբը, որ եկել էր Թիֆլիսից։

Ճաշկերոյթից յետոյ տեղի ունեցան ժողովրդական բացօդեայ պարեր։

Ժամը 4-ին Փոխարքան իր ամուսնու հետ մեկնեց դէպի երկաթուղի։

Երեկոյեան գնացքով Շուլավէր եկաւ Թիֆլիսի քաղաքագլուխ Ա. Խատիսեան, որը անկարող էր եղել աւելի վաղ մեկնել Թիֆլիսից՝ հանգուցեալ Սաթունեան արքեպիսկոպոսի թաղման պատճառով։

Գիւղական հասարակութիւնը ընդունեց Ա. Խատիսեանին սիրալիր կերպով։

Գիշերվայ գնացքով եկած հիւրերը վերադարձան Թիֆլիս։

Ալ. Քալանթարի ճառը

Այսօրվայ հանդէսի մէջ կայ մի վերին աստիճանի գնահատելի և ուսանելի գիծ, դա այն է, որ մենք մասնակցում ենք կուլտուրական ձեռնարկութեան իրագործութեանը գիւղական շրջանում։

Ցաճախակի չեն խոշոր հաստատութիւնների հիմնադրութեան դէպքերը նոյնիսկ քաղաքներում, ուր նրանք կառուցվում են՝ քաղաքային ինքնավարութեան կամ մասնաւոր նուիրատուների ջանքերով։

Իսկ բոլորովին հաղուագիւտ են և բացառակի այնպիսի դէպքեր, ինչպէս ներկայինն է, երբ մեծածախս և դժուար գործի ձեռնամուխ է լինում գիւղական ազգաբնակութիւնը։

Արդարև մեր առաջ իրագործված է մի մեծ ձեռնարկութիւն, որ պահանջել է Շուլավէրի գիւղական հասարակութիւնից մօտ 22,000 ռուբլի պատկառելի մի գումար։ Կառուցված է Ջրանցք, որի խողովակները անցնում են աւելի քան 6 վերստաչափ մի տարածութիւն։ Այն օրից, երբ գիւղը ստացել է Ջրանցքով իր խմելու ջուրը, զգալի կերպով նուազել է տիֆի, ջերմի, ստամոքսային և այլ հիւանդութիւնների դէպքերը և երբէք Շուլավէրի ժողովուրդը այնքան քիչ տոկոս հիւանդացողներ չէ տուել, քան վերջին տարին։

Եւ շուլավէրցին ամեն օր աւելի ու աւելի է համոզվում, որ նրա արած գործը իսկապէս մի էական անհրաժեշտութիւն էր իր համար։

Սակայն շուլավէրցին կանգնած է այսօր դարձեալ մի շարք ուրիշ անհրաժեշտութիւնների և կարիքների առաջ։

Այսօրվայ այն սկուտեղի վրա, որով գիւղական հասարակութեան կողմից աղուհաց մատուցվեց Փոխարքային, նկարված է մի գիւղացի, որ բռնել է գութանի մաճը և հերկում է մայր երկիրը։

Շուլավէրցի այդ երկրագործը եկել է այստեղ 110—120 տարի սրանից առաջ Դանձակի նահանգի այն շրջանից, որ գտնվում է Զանգեզուրի և Ղալաքեանդի ու Կարամարանդի միջև։

Այդ ժողովուրդը նոր երկրում գտաւ բաւականաչափ հող մշակութեան համար։ Սակայն ժամանակի ընթացքում ինքը բազմացաւ և այժմ նա ունի մօտ 1000 տուն 6000 շնչով։

Այն փոքրիկ հողի վրա, որ ունի ներկայումս Շուլավէրը, չէր կարող ապրել նրա ժողովուրդը, եթէ հացաբոյսի մշակութեան կողքին նա զարգացրած չը լինէր այգեգործութիւն և զբաղված չը լինէր լրացուցիչ կերպով արհեստներով և մասամբ առևտրով։

Բայց հողի մշակութեան ներկայ եղանակները բաւարար չէին և հողի արդիւնագործութիւնը դեռ չէ հասցված իր կատարելութեան։ Շուլավէրի հասարակութիւնը խնդիրը լուծման վերաբերութեամբ։ Ոռոգման համար ջուր կարելի է ստանալ կամ բերելով նրան հեռուից՝ Դեբեդ գետի ձորից և կամ կառուցանելով մեծ աւազան Շուլավէրի գետի ջրերից՝ պատնէշների և ամբարտակների միջոցով, որոնք կը ժողովեն ջրերը այն ամիսներում, երբ նրանք անմիջապէս չեն գործադրվում ոռոգման համար։

Այդ մէկ։ Երկրորդ՝ Շուլավէրը անհրաժեշտութիւն է զգում գիւղատնտեսական կատարելագործութիւնների և բարօրութիւնների, ուստի նպատակայարմար կը լինէր բանալ գիւղատնտեսական դպրոց արհեստագիտական բաժանմունքով և կազմակերպել հրահանգչական կամ ինստրուկտօրական գործունէութիւն։ Շուլավէրը, երբ տուել էր համախօսական մինիստրական տարրական դպրոց բանալու մասին գիւղում, պայման էր դրել, որ դպրոցը ունենայ նաև գիւղատնտեսական բաժանմունք, սակայն այդ բաժանմունքը մինչև այժմ չէ բացված։ Հրահանգչական գործունէութեանը անհրաժեշտութեան ապացոյց տալիս է հէնց ներկայ տարին, երբ գիւղական դաշտերում և մանաւանդ այգիներում աւերումներ էին կատարում դաշտային մկները և նոյնը կարելի է ասել և վաղերի ու ուրիշ բոյսերի բազմաթիւ թշնամիների դէմ մաքառումներ կազմակերպելու մասին։

Շուլավէրի զարգացման համար նշանակութիւն ունեն մի շարք և արտաքին հանգամանքներ, որոնցից կը յիշեմ միայն մի խոչընդոտ, այն է՝ երկաթուղու լիակատար կայարանի բացակայութիւնը։ Ներկայումս Աշաղա-Սարալ կիսակայարանը ապրանքներ չէ ընդունում և չէ տալիս, մինչդեռ վերցվում է աւելորդ ճանապարհային մինչև հետևեալ կայարանները։

Եթէ հաշվի առնենք, որ Շուլավէրը կարօտ է բարեկարգութեան իր գիւղի դիրքի, տների, փողոցների, ատեանների և հիմնարկութիւնների վերաբերութեամբ, մենք կը տեսնենք, որ նա ունի առաջիկայում կատարելու դեռ շատ գործեր։

Ջրանցքի կառուցումը, իբրև մի խոշոր ձեռնարկութիւն, փողոցների լուսաւորութեան ներմուծումը, իբրև աւելի մանաւոր, բայց նոյնպէս կարևոր մի գործ, և անտեսական կեանքի մէջ արած նախնական մի քանի առաջադիմական քայլեր, ցոյց են տալիս, որ Շուլավէրն ընդունակ է կուլտուրական գործունէութեան և որ նա յաջորդաբար կիրագործէ բարեփոխութիւններ իր կեանքի մէջ, բայց անկասկած է, որ խոշոր գործունէութիւնների մէջ նա պէտք ունի պետական և զեմստվոյական գործունէութեան, նաև մասնաւոր դրամագլուխների աշակցութեան։ Մանաւանդ այդ կարևոր է այնպիսի հիմնարկութիւնների համար, որոնք ունեն նշանակութիւն ոչ միայն Շուլավէրի, այլ և գաւառի համար, ինչպէս են կրթական հիմնարկութիւնները։

Ուստի ես բարձրացնում եմ բաժակ Շուլավէրի բարգաւաճման համար, ցանկանալով որ նա թէ իր սեփական ոյժերով և թէ կողմնակի աշակցութեամբ կարողանայ իրականացնել այն հերթական ծրագիրները, որոնց առաջ է մղում կեանքը իր պահանջներով։

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱԹՈՒՆԵԱՆԻ ԹԱՂՈՒՄԸ

—

Կիրակի վաղ առաւօտից Վանքի աւ. եկեղեցու զանգակատան մեծ զանգը զօղանջում էր հառաչ և դժուում ամենուրեք՝ թէ Վրաստանի և Իմերէթիայի թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոսի թաղումը կատարվելու է այդ օրը։

Ու շտապում են քաղաքի ամեն կողմից խումբ խումբ և զատ-զատ՝ ժամ առաջ տեղ գրաւելու եկեղեցու մէջ, բակում ու դուրսը։

Ժամը 11-ի մօտերը Վանքի եկեղեցու բակը և պարիսպների ծայրերը լի էին անհամար բազմութեամբ։ Եկեղեցում բացի ժողովրդից կանգնած էին պատգամաւորութիւնները և քահանայական դասը՝ գլուխ ունենալով Եփրեմ, Կարապետ, Բարգէն եպիսկոպոսներին, սինօդի անդամ Մատթէոս վարդապետին և ուրիշ երեք վարդապետներին։

Պատարագիչն էր Ամենայն Հայոց Կաթողիկոսից թաղմանը ներկայացուցիչ կարգված Մեսրոպ եպիսկոպոս Տէր Մովսիսեանը։

Երգում էր Ներսիսեան դպրոցի քառաձայն խումբը։

Հանդուցեալ սրբազանի դագաղի շուրջը բոլորել էին պատգամաւորները՝ Կովկասի Փոխարքայի ներկայացուցիչ նրա ադիւտանտ գնդապետ Թամամշեան, շէյխ-ուլ-իսլամի ներկայացուցիչը իր միւս պաշտօնակիցներով, Վրաստանի էկզարքոսի ներկայացուցիչ Ալլավերդի եպիսկոպոս Դաւիթը՝ սինօդական գրասենեակի անդամների հետ, Անդրկովկասի մուֆթին, հրէաների ռաբբին և այլք։

Եկեղեցու բակում կանգնած էին շարքերով Ներսիսեան դպրոցի, Յովնանեան և Դայիանեան օրիորդաց դպրոցներէ, Թիֆլիսի բոլոր ծխական դպրոցների աշակերտ-աշակերտուհիները՝ ամեն մինը իր հոգաբարձական կազմի և մանկավարժական մարմնի հետ։

Ներկայ էին պատգամաւորներ ազգային և հասարակական հաստատութիւնների կողմից, ինչպէս և քաղաքագլուխը՝ քաղաքային վարչութեան անդամների հետ, Թիֆլիսի գեն.-նահանգապետը և ոստիկանապետը։

Ներկայ էին նաև Ախալքալաքի, Սանահնի և Զաքաթալայի հայ հասարակութիւնների լիազօրները։

Դագաղի վրա դրված էին Ն. Կ. Մ. Կովկասի Փոխարքայի արծաթեայ և Թիֆլիսի քաղաքային վարչութեան կողմից ուղարկված թարմ ծաղիկներից մեծ խաչեայ պսակները։

Ժամը 12-ին կատարվեց հանդուցեալի մարմնի օծումը։

Այնուհետև բեմ բարձրացաւ Ատրպատականի առաջնորդ Կարապետ եպիսկոպոսը և երկար խօսեց հանդուցեալ Գարեգին արքեպիսկոպոսի յիշատակին։ Սրբազանը շեշտեց հանդուցեալի շինարար կողմը, օրինակելի եկեղեցական լինելը, նրա ցոյց տուած հասարակական գործունէութիւնը և վերջում ընդգծեց, որ հայ ժողովուրդը պէտք է իսկապէս ափսոսայ, որ ասպարէզից մէկ-մէկ հեռանում են անձնազոհ եկեղեցականներ, որոնց բացը դժուար է ծածկել։

Պատարագը աւարտվեց։ Մարմինը քահանաների ձեռքով դուրս բերվեց բակը, ուր արդէն բաց գլուխների ծով էր և ժողովուրդը, հանքարները իրանց դրօշակներով կանգնած էին շարքերով։ Կարգապահութեանը հսկում էր ոստիկանութիւնը։

Դարձեալ սահմանված արարողութեամբ դագաղը շրջեցվեց բակում, երեք տեղ կատարելով հոգեհանգիստ։

Ապա դագաղը մօտ տարվեց փորված գերեզմանին։ Հոգևորական դասը շրջապատեց դագաղը և կատարեց մի շարք ծէսեր։

Գերեզմանի վրա խօսեց Ներսիսեան դպրոցի հոգաբարձական կազմի յանձնարարութեամբ Ալ. Պապովեան, որ դրուատեց հանգուցեալին իբրև գործունեայ նախագահ հոգաբարձութեան և շնորհալի առաջնորդ, որ գիտէր հանգարտվել և հաշտեցնել հակառակ հոսանքները յօգուտ գործի։ Պապովեան առանձնապէս շեշտեց հոգաբարձութեան անկեղծ ցաւակցութիւնը հանգուցեալի մահվան առիթով, որի անունը կապված է մեծագոյն նրա վեցամեայ եռանդուն նախագահութեան և Ներսիսեան դպրոցի նորակառոյց շինութեան հետ։

Ապա, նախքան դագաղը գերեզման իջեցնելը, ռուսերէն դամբանական խօսեց Մոֆտին, որ ասաց, թէ հանգուցեալը իր մօտիկ բարեկամն էր և մեծ յարգանքով ու սիրով էր վերաբերում դէպի մահմեդականները։ «Հանգուցեալը իբրև վարդ թառամեց, —վերջացրեց մահմեդականների հոգևոր պետը,—իսկ ես 80-ամեայ ծերունիս մնում եմ իբրև վարդի տունկ...»։ Խօսելուց յետոյ հոտաւորը միւս մահմեդական հոգևորականների հետ կարդաց հակիրճ աղօթք թուրքերէն։

Ծամը 2-ի մօտերը դագաղը իջեցրին գերեզման, Ե.

ՍԱԹՈՒՆԵԱՆԻ ՄԱՀՎԱՆ ՇՈՒՐՋԸ

—

◆ Հանգուցեալ Գարեգին արքեպիսկոպոսի յիշատակը երէկ Թիֆլիսի քաղ. դուման յարգեց ոտքի կանգնելով և որոշեց թոշակաւոր պահել տարրական դպրոցներից մինում։

◆ Սանահնի հասարակութիւնը հանգուցեալի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն գրադարան է բանում Սանահնի մէջ։

◆ Թադէոս քահ. Երուանդեանը հանգուցեալի հայրենիք Աշտարակ գիւղին որոշել է մի տարով ուղարկել «Գիւղատնտես» շաբաթաթերթը։

◆ Եփրեմ եպիսկ. Սուքիասեանի անունով ստացվել են հետևեալ ցաւակցական հեռագիրները։

Նուշի.—«Գարեգին արքեպիսկոպոսի յանկարծակի մահը մեզ վրա թողեց խորին վիշտ։ Չենք կարող ժառանալ նրա արժանաւոր հովուութիւնը։ Մեղրեցոց եկեղեցու ծխականների ցանկութեամբ նոյեմբերի 7-ին կատարվեց հոգեհանգիստ։ Իսկանդարեան քահ. և ուրիշները»։

Սուխում.—«Ես և իմ հօտը մեր ցաւակցութիւնն ենք յայտնում Սաթունեան արքեպիսկոպոսի մահվան առիթով։ Տէր-Եղիազարեան գործակալ»։

Նուխի. — «Հոգաբարձութիւնը և մանկավարժական մարմինը աշակերտութեան հետ խորապէս վշտացած իրանց անկեղծ ցաւակցութիւնն են յայտնում մեր կանանց դպրոցի հիմնադիր և մեր սիրելի Գարեգին արքեպիսկոպոսի մահվան առիթով։ Հոգաբարձութեան նախագահ՝ Փալչեան»։

Կարս. — «Որքան ցաւակցութիւն եմ յայտնում. ցաւում եմ, որ չեմ կարող ներկայ գտնվել և յարգել սիրելի Գարեգին արքեպիսկոպոսի թաղումը, որի մահով հայ եկեղեցին զրկվեց արժանաւոր հովիւից, իսկ մենք սրտագին բարեկամից և ընկերից։ Որբէն եպիսկոպոս»։

◆ Ցաւակցական հեռագիրներ ստացվել են և հոգեհանգիստներ են կատարվել Սուխումում, Փոթիում, Շուշում և այլն։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

—

Պետերբուրգ, 6 նոյեմբերի։

Նախագահում է Գուչկովը։

Կարճառև վիճաբանութիւններից յետոյ, ընդունվում է մանաժողովի խմբագրութեամբ տարրական դպրոցների օրինագծի 13-րդ յօդուածը, որով հնարաւորութիւն է սահմանվում դպրոցական խորհուրդների համաձայնութեամբ աշակերտութեանը հաղորդել, բացի 12-րդ յօդուածում ցոյց տրված առարկաներից, ուրիշ օգտակար տեղեկութիւններ, ինչպէս և պարապելը ձեռքի աշխատանքով, ձեռագործով, գիւղատնտեսութեան մի քանի ճիւղերով՝ համաձայն տեղական պահանջների։

14-րդ յօդուածի վերաբերմամբ՝ կրօնի դասաւանդման պայմանների մասին, Տիչինինը առաջարկում է կրօն ուսանելու հարցը օտարազգիների համար կախան դրութեան մէջ դնել ոչ միայն դպրոցական խորհուրդներից և դպրոցներ պահանջողներից, այլ և նահանգապետից և շրջանի կառավարչից։ Հայը Տիսօվը առաջադիմականների, հայը Մացեեվիչը լեհական կօլօյի, Մաքսուտօվը և Տուկաեվը մահմեդականների կողմից պաշտպանում են իրանց ուղղումները։ Բոլոր ուղղումները մերժվում են, յօդուածը ընդունվում է մանաժողովի խմբագրութեամբ։

15-րդ յօդուածի նկատմամբ՝ դասաւանդութեան ծրագիրները և պլանները որոշելու մասին, Տիչինինը պնդում է, թէ այդ գործում առաջին տեղը պէտք է տալ դրպրոցական խորհուրդներին։ Բուլատը՝ թէ ծրագիրների մշակումը պէտք է թողնել ոչ թէ մինիստրութեան, այլ տեղական ինքնավարութիւններին։ Վլասովը պաշտպանում է սահմ.-ռամկավարների ուղղումը, թէ իսկապէս պէտք է հիմնադիրներին վերապահվի մանրամասն ծրագիրներ կազմելու իրաւունքը։ Բելօուսովը պաշտպանում է սոցիալ-դեմօկրատների ուղղումը՝ օրէնսդրական կարգով ուսումնական դասընթացքի առարկաների դասաւանդելու պարտադիր չափը որոշելու մասին։ Յօդուածն ընդունվում է մասնաժողովի խմբագրութեամբ, որով ուսումնական պլանների մշակումը թողնվում է լուսաւորութեան մինիստրութեան։

Նախագահի տեղը գրաւում է Կապուստինը, հերթին 16—18 յօդուածները են դասաւանդութեան լեզուի մասին։ Զեկուցանող Կավելիսկին պաշտպանում է մանաժողովի նախագիծը, որով Դուման նախազգուշացվում է՝ չընթանալ քաղաքական բանակռիւ սայթաք ճանապարհով այնպիսի դժուարին և բարդ հարցում, ինչպիսին դասաւանդելու հարցն է։ Խօսելու են 57 հոտաօրներ։

Լեհնօվը մանրամասն պատճառաբանում է հոկտեմբերեանների ներկայացրած կանոնները դասաւանդութեան լեզուի մասին օտարազգի երեխաների վերաբերմամբ։ Կանոնները սահմանում են, որ այն տեղերում, ուր ապրում են լեհեր, լիտվացիներ, գերմանացիներ, թաթարներ, էստոնեներ, լատիշներ, հայեր, չեխեր և վրացիներ, թոյլատրվում է հիմնել տարրական դպրոցներ մայրենի լեզուի դասաւանդութեամբ, եթէ դպրոց հիմնված տեղի սահմաններում, երեք վերստ տարածութեան վրա, կան 15-ից ոչ պակաս ոչ-ռուսախօս երեխաներ՝ յիշեալ ժողովուրդներից մէկնումէկին պատկանող։ Անհրաժեշտ ճանաչելով կեանքում այդ կանոնները գործադրելու համար պատրաստել ռուսերէն և տեղական լեզուները իմացող ռուս տեսուչներ, հրատարակել այլազգիների մայրենի լեզուով դասագրքեր և դասական պիտոյքներ, հոկտեմբերեանները համապատասխան ցանկութիւն են յայտնում լուսի համոզված՝ թէ նրանց նախագծած կանոնները ուղղված են ոչ թէ ֆլասելու, այլ յօգուտ ռուս լեզուի, ոչ թէ թուլացնելու ծայրերկիրներում ռուսական պետականութիւնը, այլ, ընդհակառակն, ամրապնդելու այն (սուլոց աջից և մասամբ կենտրօնից. ծափեր՝ մեացած կենտրօնում և օպոզիցիայում)։

Մինիստրի օգնական Գեօրգիեվսկին աջակողմեանների և նացիօնալիստների ծափահարութեամբ բողոքում է հոկտեմբերեանների առաջարկների դէմ. դասաւանդութեան լեզուն հանդիսանում է ամենաէական տարրը պետական շինարարութեան համար։ Նրանից է կախված Ռուսաստանի ապագան. պէ՞տք է արդեօք Ռուսաստանը մնայ եղակի ու անբաժանելի։ Մինիստրի օգնականը անվիճելի է համարում այն իրողութիւնը, թէ դպրոցը Ռուսաստանում պէտք է լինի ռուսական, դասաւանդութիւնը պէտք է կատարվի ռուս ուսուցիչների ձեռքով ռուսերէն։ Անցնելով այլազգիների լեզուին՝ հեռտորը ապացուցանում է, որ նրանք անհրաժեշտութիւնից դրդված գիտենալու են ռուսերէն, այլապէս նրանք չեն կարող յարվել դարաւոր ռուսական կուլտուրային։ Իսկ մանկավարժութեան տեսակէտից անկասկած լեզուն կարելի է իւրացնել միայն այն ժամանակ, երբ ռուս լեզուն կը դառնայ ոչ միայն դասաւանդութեան առարկայ, այլ և կը լինի մտածողութեան զէնք։ Յօդուածի մինիստրական խմբագրութիւնը այդ հարցը լուծում է աջող կերպով, քան մասնաժողովը, սակայն, չը պնդելով կառավարական խմբագրութեան վրա, մինիստրի օգնականը կարծում է, թէ այն ամենը, ինչ որ հարկաւոր է օտարազգիների շահերի համար, կառավարութիւնը և մասնաժողովը արել են, և դրանից հետու գնալ անկարելի է, եթէ ցանկանում են, որպէսզի Ռուսաստանում լինի ռուսական դպրոց։

Բարեսիենսկին կանգ է առնում ռուսացման հին սիստեմի անպէտքութեան վրա, որից մեացել է սոսկ ցուցանակ և որը կարելի է պահպանել սոսկ յանուն նացիօնալիզմի հին պատգամների, բայց յոյս չունենալով, թէ որևէ մէկին կարելի լինի ռուսացնել... Յենվելով իր անձնական տպաւորութիւնների վրա արևելեան ժողովուրդների վերաբերութեամբ, հեռտորը ապացուցում է, որ եթէ չը ստեղծվի պետական այնպիսի դպրոց, որպիսին իր կողմը թեքէ մահմեդական ազգաբնակութեան, հէնց դրանով էլ ռուսները կը կորցնեն այլազգիների կրթութեան գործը։ Այլազգիների մէջ անհրաժեշտ է պահպանել սէր առ հայրենիքը, բայց հին ձևերը պէտք է դէն շպրտվեն (ծափեր ձախից և կենտրօնում)։

Եպիսկոպոս Եւլոգին գտնում է, որ առաջարկվող կանոնները կարող են ռուսական դպրոցը վերածել այլազգիների շրջանում այլազգիների դպրոցի, մինչդեռ պետու-

թիւնը պարտաւոր է բոլոր տիրած ժողովուրդներին միացնել իր կուլտուրային. իբրև միջոց այդ բանի՝ ներկայանում է ռուսական դպրոցը, ռուսական պետական լեզուն։ Սրբազանը կտրականապէս դէմ է հոկտեմբերեականների առաջարկութեան և պաշտպանում է իր ուղղումը՝ թէ մայրօրէն և բէլօրուս-կաթոլիկներին պէտք է թոյլ տալ ուսանել մայրենի լեզուով (ծախքը աջից և մասամբ կենտրոնում)։

(Պը շարունակվի)

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԱՒԱՌԻՑ

Յարսկիէ-Կօլօդցի, 1 նոյեմբերի

1909 թ. յունվարի 6-ին՝ Թիֆլիսի Միրանաւոր ուխտատեղի քահ. տէր-Ղևոնդը, գալով այստեղ Զրօրհնէքի հանդէսը կատարելու համար, ինքնակամ ծածուկ տարաւ դպրոցապատկան մի կապոց գրքեր։ Այս մասին նորերս հոգաբարձութիւնը բողոքեց ռաջնորդին, խնդրելով հրամայել քահանային վերադարձնել գրքերը։

Մօտ օրերս 2 տարեկան մի ռուս երեխայ, խաղալով պարտէզում, ընկնում է պարտէզում կանգնած ջրի մէջ և խեղդվում։

N. N.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Երէկ Շուլավէրի հանդիսից Վերադարձան Կովկասի Փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրօնցով-Դաշկովը իր շքախմբով, Վրաստանի էկզարխ Ինոսկենտի արքեպիսկոպոսը, Թիֆլիսի նահանգապետ Լօզինա-Լօզինսկին և միւս հրաւիրված անձինք։

◆ Հոկտեմբեր ամսվայ ընթացքում Թիֆլիսում եղան 137 վարակիչ հիւանդութեան դէպքեր։

◆ Երէկ Միխայիլ Արխանգէլի տօնի առիթով կատարվեց հոգեհանգիստ Թիֆլիսի ոստիկանապետի դիւանատան մէջ, որին ներկայ էին Կովկասի Փոխարքայի օգնական սենատոր Լատացին, գեն.-նահանգապետը, քաղաքագլուխը, մէջլիսների, արհեստաւորների վաճառականների աւագները և այլն։

◆ Այսօր երեկոյեան Բարեգործական Ընկերութեան դահլիճում Դրամատիկական Ընկերութեան վարչութեան նախաձեռնութեամբ կայանալու է ժողով Շիրվանզադէի 30-ամեայ գրական գործունէութեան յօբելեանի կատարման մասին խորհրդակցելու համար։

◆ Ֆրանսիական «Alliance Française» ընկերութիւնը ամսիս 11-ին, հինգշաբթի օրը, Բիրժայի դահլիճում տալիս է մի հեռաքրքրական երեկոյթ՝ հետևեալ ծրագրով։ Նախ կը ներկայացվի «En lisant Sherlock Holmes» (Շէրլօկ Հօլմսը կարդալիս) կատակերգութիւնը մի գործողութեամբ։ Ապա կը նուագէ դաշնամուրի վրա օր. Արնօլդ։ Երաժշտութիւնից յետոյ կը տրվի մի վոդվիլ «Le consolateur» (Կանանց մխիթարողը), չափազանց ծիծաղաշարժ։ Սկիզբը ժամը 8½-ին։ Մուտքը ընկերութեան անդամների համար 20 կոպէկ է։ Հիւրերը վճարում են 50 կոպէկ մուտքի համար։ Այն երեկոյ կարելի է անդամ գրվել. վճարը տարեկան 3 ռուբլի։ Տարին հաշվում է հոկտեմբերի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը։

◆ Բարձրագոյն հաստատված յանձնաժողովի տեղեկութիւնների համաձայն, պետութեան զանազան տեղերում խօլերայի սկզբից հիւանդացել են ընդամենը 213,941 մարդ, մեռել են 99,882 մարդ։

◆ Երէկ երեկոյեան քաղաքային դումայի լսելով ձայնաւոր Վեսելովսկոյի առաջարկութիւնը՝ որոշեց վերցնել դումայի դահլիճում կախված Թիֆլիսի քաղաքագլուխների լուսանկարները։

◆ «Баку»-ի մէջ կարդում ենք. «Այս նոյեմբերի 5-ի գիշերը Բաքուի վրայով Շուշուց Նօվօչերկասկ մեկնեց ժանդարմների ուղեկցութեամբ՝ «Դաշնակցութիւն» կուսակցութեան գործի համար Շուշում ձերբակալված քաղաքային բժիշկ Մնացականեանը, որ անցեալ տարի վարում էր քաղաքային բժշկի պաշտօն Բաքուում։ Ձերբակալվածին Նօվօչերկասկ է պահանջել քննիչ Լրժինը։

◆ Շուտով Բաքուում տեղի է ունենալու օդաչուցութեան շաբաթ, որին մասնակցելու են մի քանի օդաչուներ։

◆ Նոյեմբերի 3-ին, առաւ. ժամը 10-ին, Բաքուում, ջրի ուժեղ հոսանքից ծածկվեց կասպիական Ընկերութեան 10 դիւյմանոց ջրի խողովակը։ Ջուրը տանելով նաւթաբդիւնաբերողների համագումարի խորհրդի ջրանցքի թումբը, քանդեց նրան այն աստիճան, որ ամբողջ ջուրը ջրանցքից դուրս պոռթկաց և ծածկեց Փիթօյևի նաւթանքի փողոցը, նաև ծածկեց Թառայեանի և Միտրոֆանովի նաւթահորերը։ Փողոցում երթևեկութիւնը դադարեց։ Շարունակվում են մաքրելու աշխատանքները։

◆ Նոյեմբերի 5-ի երեկոյեան Բաթումից դուրս եկած պօստային գնացքի վրա Մցխէթ կայարանում գործվել է զինված յարձակում։ Շտապով Թիֆլիսից մեկնեցին զինուորներ։ Յարձակումը յետ է մղված։ Երկու կողմից կրակել են 30 անգամ։

◆ Թիֆլիսում է պաշտօնական գործերով Բութայիսի նահանգապետ Սլասովչինսկին։

◆ Բութայիսի քաղաքագլխի պաշտօնի համար խօսում են Ե. Պանցխավի մասին։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Անցեալ թատրօնական սեզօնում վրաց բէպերտուարը հարստացաւ մի նոր պատմական դրամայով ևս, որի բովանդակութեան հետ մենք ծանօթացրինք ժամանակին «Մշակի» ընթերցողներին։ Այդ դրաման է «Մինգրէլիայի թագաւոր Լէվանը» պիէսան, որը և խաղաց վրաց դերասանների խումբը, ամսիս 7-ին, վրաց թատրօնում։

Առհասարակ նկատելի է, որ վրաց հասարակութեան մի ստուար մասը շատ է սիրում պատմական պիէսները տեսնելը. հէնց դրան էլ պիտի վերագրել, որ այդ ներկայացումը գրաւել էր մեծ քանակութեամբ ժողովուրդ։ Խաղը անցաւ բաւական կենդանի կերպով։

Հետեւեալ ներկայացումը լինելու է ամսիս 11-ին։ Խաղացվելու է երկրորդ անգամ Գօրդինի «Սատանայ» պիէսը։ Ա—ս

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Յարսկիէ-Կօլօդցի, 30 հոկտեմբերի

Առաջիկայ 1911 թ. յունվարի 1-ից վարչութիւնը իր իրաւասութեան ներքոյ բաց է անում Յարսկիէ-Կօլօդցիում ժողովրդական ձրի գրադարան-ընթերցարան։ Նա ունենալու է գրքեր և պարբերական հրատարակութիւններ հայերէն, ռուսերէն և վրացերէն լեզուներով։

Խնդրում ենք խմբագիրներին, հեղինակներին, թարգմանիչներին, հրատարակիչներին և ուրիշ անձանց, որոնց սրտին մօտ է խաւար ժողովրդի լուսաւորութիւնը, բարեհաճել նուիրել մեր գրադարան-ընթերցարանին գիրք կամ լրագիր ռուսերէն, հայերէն և վրացերէն լեզուներով, որի համար կը մնանք շատ շնորհակալ։

Վարչութիւնս շնորհակալութիւն է յայտնում Կ. Հ. Բ. Ընկերութեան խորհրդին, որը ձրի ուղարկում է մեր գրադարան-ընթերցարանին «Գիւղատնտես» և «Նոր-Դպրոց», այլ և 100 ռուբլի նպաստ է նշանակել Յարսկիէ-Կօլօդցիի հայոց աղքատ դպրոցին, նոյնպէս ուղարկել է 31 հատ գիրք։

Հասցէն՝ Царскіе-Колодцы. Правленію Царско-Колодскаго Отдѣленія Армянскаго Благоторительнаго Общества на Кавказѣ.

Կ. Հ. Բ. Ընկերութեան
Յարսկիէ-Կօլօդցիի վարչութիւն

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Խօլերայով հիւանդ մնում են 29 հոգի։

Պաշտօնից արձակվեց Վարշավայի համալսարանի բեկտոր Կարսկին։

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐ։ Գօրեաչի Կլիւչ կոչված տեղում հարանիքին վէճի ժամանակ հրացանով սպանվեց փեսան։ Հիւրերից 4 հոգի վիրաւորվեցին, որոնցից 2-ը ծանր։ Մարդասպանը փախաւ։

ՕՌԵՍՍԱ։ Մի շաբաթում ժանտախտով հիւանդացան 4, առողջացան 2, մեռաւ 1 հոգի։ Գաւառում 2 շաբաթվայ մէջ ոչ ոք չը հիւանդացաւ։

ՏԻՒՄԷՆ։ Զինուորական դատարանը 2 բանտարկեալի մահվան պատժի դատապարտեց 3 պահակների սպանելուն և էտապից փախչելուն համար։

ԲԱԳՈՒ։ Օդագնաց Գաբէր-Վլինակին «Ֆարմանով» բարձրացաւ 300 մետր և օդում մնաց 30 րոպէ։

ԽԱՐԿՕՎ։ Կատարվեց յայտնի ակնաբոյժ պրոֆէսոր Գիրշմանի 25-ամեայ յօբելեանը։

ՎԱՐՆԱ։ Խօլերայից մեռաւ մի Թիւրք։

ԴԱՐՄՇՏԱԴ։ Պրուսական Հէնրիխ պրինցը, քննութիւն տալով պաշտօնական մասնաժողովի մէջ, ստացաւ օդաչուի կոչման վկայական։

ԲՈՒԽԱՐԵՍՏ։ Բօլգարիայում երևցած խօլերայի պատճառով այնտեղից եկողները ենթարկվում են բժշկական քննութեան։

Ռումինական սանիտարական յանձնաժողովը վերացրել է կարանտինները Սերբիայում խօլերան վերջանալու պատճառով։

7 նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Վախճանվեց Դումայի անդամ քահանայ Զլատօմրեժէկը։

Խօլերայով հիւանդ մնում են 29 մարդ։

ՎՕՐՕՆԵԺ։ Թատրօնում տեղական նացիօնալ կլուբի անդամներից մինը զեկուցում կարդաց նացիօնալիզմի մասին, որից յետոյ 340 մարդ ցանկութիւն յայտնեցին անդամ գրվել։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՒ։ Բախմուտի գաւառում Սելէզնեվի հանքի մօտ յարձակում գործվեց Մաշուբեանցի բնակարանի վրա։ Սատիկ ծեծվեցին գանձապետը և պահապանը. յափշտակել են 1000 ռուբլի։

ԿՕԼՕՄԲՕ։ Եկաւ գերմանական կրօնպրինցը կնոջ հետ։

ԼԻՍԱԲՕՆ։ Մինխարների խորհուրդը ընդունեց կանաչ-կարմրագոյն գոյնի նոր դրօշակի նախագիծը։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Անժամանակ պարպված թընդանօթից ծովային վարչութեան մարդասպանները սպանվեցին 3 նաւաստիներ և մի օֆիցէր։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԽԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ԽԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
(2մերային երթևեկութիւն)
(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲՈԳՈՒՏ՝ գարագ № 2 գնացքը՝ 9 ժ. 28 ր. առաւ., Գանձակ է հասնում 2 ժ. 38 ր. ցեր., Եւլախ՝ 4 ժ. 18 ր. ցեր., Հաջի-Կարուլ՝ 8 ժ. 12 ր. երեկ., Բալաջարի՝ 10 ժ. 59 ր. գիշ., Բագու՝ 11 ժ. 26 ր. գիշ.։ Մարդատար № 6 գնացքը՝ 3 ժ. 35 ր. ցերեկ., Գանձակ է հասնում 9 ժ. 56 ր. երեկ., Եւլախ՝ 12 ժ. 7 ր գիշերվայ, Հաջի-Կարուլ՝ 4 ժ. 49 ր. գիշ., Բալաջարի 8 ժ. 13 ր. առաւօտ., Բագու՝ 9 ժ. 7 ր. առաւ.։ Պօստատար № 4 գնացքը՝ 10 ժ. 25 ր. գիշ., Գանձակ է հասնում 4 ժ. 47 ր. գիշ., Եւլախ՝ 7 ժ. 3 ր. առաւ., Հաջի-Կարուլ՝ 12 ժ. 11 ր. ցեր., Բալաջարի՝ 3 ժ. 53 ր. ցեր., Բագու՝ 5 ժ. 21 ր. երեկ.։ Խառն գնացքը՝ IV կարգի վագոններով բատ հարկի կարևորութեան՝ 4 ժ. 18 ր. գիշ., Գանձակ է հասնում 12 ժ. 48 ր. ցեր., Եւլախ՝ 4 ժ. ցեր. Հաջի-Կարուլ՝ 11 ժ. 39 ր. գիշ., Բալաջարի՝ 4 ժ. 31 ր. գիշ., Բագու՝ 5 ժ. 22 ր. առաւօտեան։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԻՎԱՆ՝ պօստատար № 74/73 12 ժ. 41 ր. գիշ., Ալէքսանդրօպոլ է հասնում 11 ժ. 41 ր. առ., Էջմիածին կայար.՝ 5 ժ. 18 ր. ցեր., Երևան (առանձին Էջմիածին կայար.՝ 5 ժ. 18 ր. ցեր., Երևան (առանձին գնացք Ուլուխանլուից յարմարեցված այս գնացքին)՝ 7 ժ. 11 ր. երեկ., Նախիջևան՝ 11 ժ. 21 ր. գիշ., Ջուլֆա՝ 1 ժ. 5 ր. գիշ.։ Մարդատար-պարանքատար № 78/79 գնացքը՝ 4 ժ. 33 ր. ցեր., Ալէքսանդրօպոլ է հասնում 3 ժ. 31 ր. գիշ., Էջմիածին կայար. 9 ժ. 3 ր. առաւօտեան, Երևան՝ 10 ժ. 34 ր. առ., և սրանից դէպը այլուս չէ գնում։ Խառն գնացք IV կարգի վագոններով բատ հարկի կարևորութեան № 108/109 5 ժ. 48 ր. գիշ., Ալէքսանդրօպոլ է հասնում 7 ժ. 20 ր. երեկ., Էջմիածին կայարան՝ 1 ժ. 30 ր. գիշ., առանց Երևան մտնելու, Նախիջևան՝ 9 ժ. 49 ր. առաւ., Ջուլֆա՝ 11 ժ. 58 ր. ցերեկ.։

ԲԱԹՈՒՄ՝ մարդատար № 5 գնացքը՝ 8 ժ. 10 ր. առաւ., Միխայլօվօ է հասնում 12 ժ. 18 ր. ցեր., Բաթում՝ 9 ժ. 20 ր. երեկ.։ Պօստատար № 3 գնացքը՝ 2 ժ. 9 ր. ցեր., Միխայլօվօ է հասնում 6 ժ. 18 ր. երեկ., Բաթում՝ 4 ժ. 28 ր. գիշ.։ Մարդատար № 7 գնացքը՝ 11 ժ. 53 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 3 ժ. 53 ր. գիշ., Բաթում՝ 1 ժ. 26 ր. ցեր.։ Խառն գնացք № 107 բատ հարկի կարևորութեան՝ 1 ժ. 5 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 6 ժ. 54 ր. առաւ., Բաթում՝ 8 ժ. 33 ր. երեկ.։

ԲՕՐԺՕՄ՝ մարդատար № 9/66 գնացքը՝ 3 ժ. 28 ր. ցեր., Գորի է հասնում 6 ժ. 8 ր. երեկ., Միխայլօվօ՝ 7 ժ. 43 ր. երեկ., Բօրժօմ՝ 9 ժ. 8 ր.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՄՆՈՒՄ

ԲՈԳՈՒՏԻՑ՝ մարդատար № 5 գնացքը՝ 7 ժ. 25 ր. առաւօտեան։ Պօստատար № 3՝ 1 ժ. 9 ր. ցեր.։ Ադագ № 1 գնացքը՝ 10 ժ. 55 ր. գիշ., որ այլևս դէպը չէ գնում։ Խառն գնացքը IV կարգի վագոններով 12 ժ. 3 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ մարդատար № 6 գնացքը՝ 2 ժ. 46 ր. ցերեկ.։ Պօստատար № 4 գնացքը՝ 9 ժ. 25 ր. գիշ.։ Մարդատար № 8 գնացքը՝ 8 ժ. 45 ր. առաւ., որ դէպը այլ ևս չէ գնում։ Խառն գնացքը IV կարգի վագոններով 3 ժ. 16 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԻՎԱՆԻՑ՝ պօստատար № 72/73 գնացքը՝ 6 ժ. 36 ր. առաւ.։ Մարդատար-պարանքատար՝ № 80/81 գնացքը՝ 7 ժ. 1 ր. առաւ.։ Խառն գնացքը IV կարգի վագոններով՝ 10 ժ. երեկ.։

ԲՕՐԺՕՄԻՑ՝ մարդատար № 61/10 գնացքը՝ 7 ժ. 35 ր. առաւօտ.։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.—Արագ գնացքները (№ 2՝ Թիֆլիս-Բագու և № 1՝ Բագու-Թիֆլիս) առանց փոփոխելու գնում են մինչև Բօսաով և յետ դառնում, անպատճառ մտնելով Բագու՝ ամբողջ կազմով և բոլոր տեղերը պլաց-կարտով են։ Այս գնացքներում կայ Միջազգային Ընկերութեան մի մի քօսա 1/11 կարգի վագոն, որ առանց իջեցնելու հաղորդակցում է Թիֆլիս-Բագու-Մոսկվա՝ աւելացված վճարով (1000 վերստը 1 կարգի վագոնում 8 ռ., II կարգի՝ 6 ռ.)։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—11 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական, վիրաբուժութեան և միզասեռ. հ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՇԱՑ—12½—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1½—2 ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆՆԵՐԸ՝

ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՇԱՑ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկ սհատ.։

Վճարը 50 կ.։ Հաշտարները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
103. 0—119

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
ՆԵՐՔԻՆ և ՋԱՂԱՑԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունել. ամեն օր { Առաւօտ. ժ. 9—12 / Երեկոյ. ժ. 5—7
(Ե.Հ.Կ.) 1254. 100—2

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ։
Պրոֆ. Mathieu-ի մանանգիտական կլինիկայից՝ Պարիզում։
Ընդունելութիւն { առաւ. ժ. 9—11. / երեկ. ժ. 5—7.
Ելիզավետինսկայա փող. № 39.
(Ա. օ.) 1179. 100—19

ԲԺԻՇԿ
Վ. ԱՐԾՐՈՒՆԻ
Ականջի, քթի, բերանի, կոկորդի
հիւանդութիւններ։
Ընդունե- (Առաւօտեան 9—1 ժամը.
լութիւնը (Երեկոյեան 5—7 ժամը.
Վելիամինովսկայա փ. № 13, տ. Սէյլանովի, 3-րդ գիշերապարի կողքին։
(օ. մ.) 1227. 100—5

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
առանձնապէս ՍՏԱՄՈՔԻ և ԱՂԻՔՆԵՐԻ
հիւանդութիւններ։
Ընդունելութիւն { 10—11 ժ. առ. (Երեխաներին) / 5—7 ժ. երեկ. (բնդհանուր)
ամեն օր
Միքայէլեան փող., № 36. Տելեֆոն № 388.
(Ե.Հ.Կ.) 909. 100—41

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է
Ա. ԱԹԱՆԱՍԵԱՆԻ
ԲԱՄԲԱԿԸ
ԵՒ
ՆՐԱ ՄԾԱԿՈՒԹԻՒՆԸ
Գործնական եւ լրիւ ձեռնարկ բամբակագործութիւնը պարապողների համար։
20 նկարներով
Գինն է 40 կօպ.
Դիմել՝ Тифлисъ, Редакція „Гюхатнтесъ“, կամ «Գուտտենբերգ», «Գիր», «Կենտրոնական» գրավաճառանոցներին և Բագու „Сотрудникъ“-ին։
(Ե. Կ.) 1233. 10—4

ԱԳԵՆՏ
Յ. Գ. ԽԱԼԱԹԵԱՆ
ՐԷԿԼԱՄՆԵՐ ԵՒ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ընդունում եմ տեղական և օտար քաղաքների լրագիրների և ամսագիրների համար՝ ամենաէժան պայմաններով, ԳԱՅԸԸ ՄԲՍ-ՄԲԱՍ։ Ընդունում եմ նոյնպէս կոմիսիոնական ամեն տեսակ պատուէրներ։
Ունեմ երկար տարիների փորձառութիւն։
Խնդրում եմ չը շփոթել ինձ միւս ագենտների հետ։
Հասցէն՝ Красногорская, 30. ТЕЛЕФОНЪ № 1041.
Պատուէրները կատարում եմ ճշգրիտ կերպով։
Անձամբ կազմում եմ ամեն տեսակ ռեկլամներ։
(օ. մ.) 1139. 25—18



ԲԱՑՎԱԾ Է 1911 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
XXIX ՏԱՐԻ **ԱՂԲԻՒՐ ԵՒ ՏԱՐԱՂ** XXII ՏԱՐԻ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍՆԵՐի
Տարեկան բաժանորդներ ստանում են.
I. ԱՂԲԻՒՐ պատկերազարդ ամսագիրը «Մանկական Աշխարհ» յաւելուածով։
II. ՏԱՐԱՂ պատկերազարդ հանդէսը «Թատրոն և Երաժշտ.» յաւելուածով։
III. ԱՌՈՂՋԱՊԱՀ պատկերազարդ ամսաթերթը «Հոգու և Մտքի առողջութիւնը» յաւելուածով։
IV. ԱՂԲԻՒՐԻ ԱԿՈՒՆՔ III և IV պրակներ։
V. ԳԵՂԱՓՆՋԻԿ ՕՐԱՑՈՑՑ 1912 թ.։
VI. ԱՐՕՋԱ, Fantasie իրականութիւնից։
VII. ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ, շքեղ նկար ապակեայ պատրաստ շրջանակով, յարմարեցված թէ սեղանի վրա դնելու և թէ պատից կախելու։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԱՂԲԻՒՐ տարեկան 3 ր., (Արտասահման 5 ր.) Դպրոց. աշակ. հասցէով 1 ր.
ԱՌՈՂՋԱՊԱՀ » 2 ր. (Արտասահման 3 ր.) » » » 1—50 կ.
ԱՂԲԻՒՐ ԱՌՈՂՋԱՊԱՀ 5 ր. (Արտասահման 7 ր.) » » » 2 ր. —
ԱՂԲԻՒՐ, ԱՌՈՂՋԱՊԱՀ, ՏԱՐԱՂ, ԱՂԲԻՒՐԻ ԱԿՈՒՆՔ ԳԵՂԱՓՆՋԻԿ ՕՐԱՑՈՑՑ ԱՐՕՋԱ, ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ բոլոր յաւելուածներով և պրեմիաներով — 10 ր. ԱՐՏԱՍԱՀԱՆ 18 ր. Դիմաց 50 ֆր. 5 Բոլորագրեալ տեղերում դրամ. Հինգ ռ.։
Ապահովիկ և մաս-մաս բաժանորդագրութիւն չէ ընդունվում։
Այն դպրոցները, որ 50 բաժանորդ կը տան «Աղբիւրին», նրանց կուղարկվի 5 օրինակ «Աղբիւր» չքաւոր աշակերտների համար։
Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Агбюръ“ կամ „Таразъ“.
Tiflis (Caucase) Direction „Agbür“ կամ “Taraz“.
Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ
(Ե. ու.) 1234. 0—3



ՀԻՊՆՕՏԻԶՄ
ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԷՔ ՀԻՊՆՕԶԱՑՆԵԼ
Հիպնոտիզմը բնական ձիրք չէ։ Ամեն ոք կարող է տիրապետել այս խորհրդաւոր գիտութեան։
Հիպնոտիզմ սովորելը նոյնքան հեշտ է, որքան ուսել խմելը։
Հիպնոտիզմը կը բժշկէ հիւանդութիւններ և կուղղէ մոլութիւններն ու վատ բարքերը։
Հիպնոզական ցուցահանդէսները չափազանց զուարճալի են։
Սովորեցէք հիպնոզացնելու արուեստը։ Մշակեցէք ձեր մէջ ներշնչելու զօրութիւնը և այդ սքանչելի ոյժի միջոցութեամբ դարմանեցէք հիւանդութիւններ, տուէք ապշեցուցիչ ցուցահանդէսներ թատրոններում կամ մասնաւոր սրահներում և դարձէք պրոֆէսիոնալ հիպնոտիստ։
Սովորելու ծախքը շատ չնչին է։
Ստացէք իմ «Ինչպէս հիպնոսացնել» պատկերազարդ գրքոյկը, որը կը տայ ձեզ լիակատար բացատրութիւն հիպնոտիզմի, Մեսմերիզմի, Հոգեբուժութեան, Ներշնչման, Հոգեմտեսութեան և ցեկեպաթիի մասին։ Այս գրքոյկն ստանալու համար պէտք ուղարկել 10 կօպէկի նամակագրական ճանապարհածախքի համար։
ԳՐԵՑԷՔ ԱՅՍՕՐ։ Գրեցէք ձեր անունն ու հասցէն որոշ։
Դիմել հետևեալ հասցէով՝ Америка. Haroutun Shekerjian. 3758 Indiana Ave. Chicago, Ill. U. S. A.
(Ե.Հ.) 689. 100—45

Լ. Լայեֆի լաբորատորիայի Օրլեան գաղաֆում (ՖՐԱՆՍԻԱ)
ԵՕԴԻՐԻՆ ԲԺՇԿԱՊԵՏ ԴԵՇԱՆԻ
(Iodhyrine du d-r Deschamp)
ՇԱՏ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՄԻՋՈՑ
ՉԱՂԱՆԱԼՈՒԴԷՄ
որ խորհուրդ են տալիս բժիշկները, փառաւոր հետևանքներով։ Բժշկապետ Դէշանի Եօդիրինը նշանաւոր միջոց է համարվում չաղութեան դէմ. նրա ազդող ներգործութիւնը նկատվում է հէնց բժշկութեան սկզբում։
Բժշկապետ Դէշանի Եօդիրինը բոլորովին անվնաս է օրգանիզմի համար։
Հեռացնում է չաղութիւնը սատիճանաբար շատ կարճ ժամանակամիջոցում։
Շրկիրկի գինը, որ պարունակում է 60 դեղհատներ, արժէ 4 ր. 25 կոպ.։
Նախվում է բոլոր դեղատներում և դեղատային խանութներում։
Ընդհանուր ներկայացուցչութիւնը Ռուսաստանում
Торговый Домъ ЛЮКСЕМБУРГЪ и К-о, Варшава, Журавья. 40.
(8,18,28) (В. 61952) 1084. 8—6



ԴԵՂԱՀԱՏՆԵՐ
CASCARA MIDY
Ֆրանսիական ժողովրդական միջոց
ՍՈՎՈՐԱԿԱՆ ՓՈՐԿԱՊՈՒԹԵԱՆ դէմ։
Ընդունելութեան չափը. 2 ԴԵՂԱՀԱՏ ԵՐԵԿՈՆԵՐԸ, ՊԱՌԿԵԼՈՒՑ ԱՌԱՋ։
Cascara Midy-ն (Կասկարա Միդի) չէ առաջացնում որովայնի մէջ ցաւեր, ոչ էլ հևոց և փոլուծութիւն։
Դեղավաճառանոց MIDY, 140, faubourg St. Honoré, Պարիզ. Ռուսաստանի գլխաւոր դեղավաճառանոցներում։
(8, 18, 28) (M. 305088) 1050. 0—30

Типографія „Экономія“, Большая-Ванкская № 3.